12004

203.7
Ջ-2.2

ՆԱԵՒ
ՀԱՅԱՐԴՈՒԹԵԱՆ
ՄԱՍ Բ.

Humphreys Jun.
Vikrumbhans
Rs 61.

203.7 1875
Տ-49 ա
1200-ԿԿ

ՀԱՅԱՐԴՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՆԱՄԱԿՆԵՐ

ՍՈՒՐԲ ԽՈՐՀՐԴՈՅՍ ՎՐԱՅ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ՏԵՏՐԱԿ Ա.

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՊՐՈՒՍԱՑԻՈՅ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՄՈՒՌՃԵԱՆՑ

1008
3Ս230

ՀՐԱՄԱՆԱՒ ՏԵԱՌՆ ՄԱՏԹԷՈՍԻ

ԱՌԱՔԵԼԱՀԱՒՈՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ
Հ. Հ.
ԳՐԱԳԱՐԱՆ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

=1846=

264

ՑԱՐԼԻ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔԵՐՈՒՆ

ՑԱՐԼԻ ԱՍՏՈՒԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՍՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԻՊԵՐԻՆ Ը.

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԻ

ԱՌԱՆՁԻՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅԵՐԷՆԻ ՏԵՂ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ

ՀՈՍԻՈՅԻ ՏՊԱՐԱՆ ՍԻՐԱՆՈՇ ԵՐԵՍԻՆ

ԱՅԺՄԱՅՍԸ ՀԱՅ ՀՈՍԻՈՅԻՆԵՐԻ ԵՒ ՄԱՍՆԱՎՈՐԱՑԵԼՈՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ

ԳՈՍՏԱՆԴԻՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՅԺՄԱՅՍԸ ՀԱՅ ՀՈՍԻՈՅԻՆԵՐԻ ԵՒ ՄԱՍՆԱՎՈՐԱՑԵԼՈՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ

Ի ՍՊԱՍՏԱՆՈՒՄ Ի

ՀԻՆԳՆԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ ՀԱՅԿԱԿԱՆՔՍ Ի

— 1846 —

Ն՛ՇՄԱՐՈՍԱԽՆԴԻՐ ԿԱՐԵԿԱՄ։

ԱՅՍ Նիւթոյս վրայ գրված առաջին մասին մէջ յայտնեցինք՝ որ հաղորդութիւն խորհրդոյն վրայ եկեղեցւոյ ունեցած հաւատքը, որով կը հաւատայ թէ քահանային ձեռքի հացն ու գինին սրբագործութիւն մարմին և արիւն կ՚ըլլան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, անմիջապէս սուրբ գիրքէն առնուված է։ Տեսար և կարդացիր և դատեցիր, որ Քրիստոսի ըսած խօսքերը թէ որ այլաբանութեամբ չի հասկընամք, գրվածին պէս հասկընալու ըլլամք նէ, եկեղեցւոյ հասկրցածին պէս պիտի հասկընամք. անոր համար այլաբանութիւն հասկընալ հարկ եղած է եկեղեցւոյ հաւատքը չընդունողներուն. բայց թէ Յովհաննու վեց գլուխը, թէ Մատթէոսի և Մարկոսի և Ղուկասու աւետարանին վերջին ընթրեաց պատմութեանը մէջ, և թէ Պօղոս առաքելոյն առ կորնթացիս գրած առաջին նամակին տասն, և տասն և մէկ գլուխներուն մէջ՝ Քրիստոսի խօսքը այլաբանութիւն հասկընալու պատճառ մը չկայ։

Այս այս ըսածիս հաստատութեանը համար սա՛ալ կ՚ըսեմ, և հրամանոցդ խոր-

հրդաձուԹԷ ընդարձակ նիւԹ կուտամ։ Թէ որ եկեղեցին անանկ հաւատար՝ որ այս խօսքերս այլաբանուԹեամբ զրուցված են, և ըսէր ԹԷ՝ նկարագրական մտօք հասկըցողը կը սխալի, և նորադանդները ելլէին նկարագրական մտօք մեկնէին, և եկեղեցւոյ հասկըցածը ծուռ է ըսէին նէ, խօսքերնին շատ զօրաւոր կ'ելլար. քանզի սուրբ գրոց խօսքերը անոնց ըսածին շատ ուժ կուտար։ Հիմա այս ուժս ամբողջ՝ եկեղեցւոյ ձեռքն է. ինչպէս որ առաջին մասին մէջ տեսանք։ Այս աւելի սա ուժն ալ կայ՝ որ եկեղեցւոյ միայն յատուկ է. աղանդաւորները քնաւ մէկ ատեն մըն ալ այս ուժս ունեցած չեն, և ունենալիք չունին. և այս է՝ որ եկեղեցին 'ի սկզբանէ հետէ այս անիմանալի և անհասանելի խորհրդոյս վրայ մի և նոյն հաւատքը ունի. ամենևին անկէց փոխված չէ. և որովհետև ճշմարտուԹեան նշաններուն մէկն ալ անփոփոխ ըլլալն է, եկեղեցւոյ հաւատքը այս նշանս ալ ունի։

Աղանդաւորները կ'ըսեն որ՝ որովհետև հայրապետները մարդ են, ուստի կրնան սխալիլ. և սխալած ալ են. և որովհետև եկեղեցւոյ մէջ այս հաւատքիս շարունակուԹեանը ապացոյցը հայրապետներուն խօսքերը պիտի ըլլան. ուստի ապացոյցները ուժ չունենալով՝ եկեղեցւոյ մէջ շարունակ այս հաւատքս գտնըվլլին ալ կաս-

կածելի է։ Անեւանդ թէ՝ հաղորդութիւն խորհրդոյն մէջ հացին և գինիին Քրիստոսի մարմին և արիւն ըլլալը հաւատալու ոչ սկիզբն ըրաւ և ոչ այս հաւատքս տարածեց, եկեղեցական պատմութիւնը մի ըստ միոջէ կը սորվեցընէ կ'ըսեն։

Բայց նախ և առաջ. թէ որ այս սուրբ խորհուրդս Քրիստոսի մարմին և արիւն է ըսող հայրապետները սխալեցան, և այս սխալս առաքեալներուն օրէն մինչեւ հիմա շարունակեց նէ, ինչպէս որ պիտի տեսնամք, այդ ըսողներէն կ'ուզեմք մեզի ցրցընեն իրենց շիտակ ըսած հաւատոյն շարունակութիւը։ Մենք եր Իգնատիոս և եր Յուստինոս և սուրբ Իրանոս կը ցրցընեմք նէ՝ անոնց ալ հարկ է ասոնց ժամանակակից մարդ ցրցընել։ Իւ այն մարդիկը որ անոնցմէ կ'ուզեմք՝ եկեղեցւոյ մէջ իբրեւ սուրբ յարգութիւն գտած մարդիկ չըլլան ալ նէ վնաս չունի. քանզի մենք ալ մեր վկայ բերածներնուս մէջը Որոգինէս և Տերտուղիանոս ալ պիտի շարեմք. Վաղենտինեան հերետիկոսներէն կախարդ Մարկոս ըսվածն ալ մեր հաւատոյն հնութեանը վկայ պիտի բերեմք. կռապաշտներուն անգամ քրիստոնէից համար ըրած զրպարտութենէն՝ այն ատենվան քրիստոնէից հաւատքը ինչ ըլլալը պիտի հաստատեմք։

Հայրապետներուն համար մենք անսխալ են չեմք ըսեր. ինչպէս որ առ հաստա-

բակ ո՛ և իցէ մարդու համար ալ անախալ չեմք ըսեր. բայց գիտեմք որ սխալելն ալ կանոն և կարգ ունի. ուստի եկեղեցւոյ հայրապետներուն կրնալ սխալելուն և երբեմն իրօք ալ սխալած ըլլալնուն վրայ Տայլէանուն կալվինական քարոզիչին շինած գրքին համառօտուիլը տաճկի լեզու թարգմանելով հայերէն գրով Իզմիր Կոլիֆիթին տպարանը 1845ին տպող յարգելոյն աշխատութիւնը կը մեղքընամք, որ Տայլէին տրամաբանութեանը ծուռ ըլլալը չի կրնալով նշմարել՝ ինքն ալ (կարծեմ պարզամիտութեամբ) նոյն ծուռ տրամաբանութիւը տարածելու գործիք մը եղեր է։ Նոյն գրքին նպատակը այն է որ՝ եկեղեցւոյ հաւատքը կրնայ սխալիլ. և ասիկայ հաստատելու համար հայրապետներուն սխալիլը ապացոյց կը բռնէ։ Բայց թէ որ մէկը ելլէ, եկեղեցի ըսելը հայրապետ ըսել չէ՛, և հայրապետը սխալելով եկեղեցին սխալած չըլլար ըսէ նէ՝ ասոր ո՛չ Տայլէ և ո՛չ անոր գրքին թարգմանողը և համօրէն կուսակիցները՝ տալու պատասխան չունին։

Երբ որ հայրապետ մը ըսէ թէ՝ ինձի անանկ կը թուի որ այս ինչ բանը այսպէս է, թէպէտ ուրիշները ուրիշ կարծիքի վրայ են. ասանկ ըսող հայրապետը կրնայ սխալած ըլլալ. քանզի ըսածը իւր առանձին կարծիքն է։ Այս ասանկ են սրբոյն Յուստինոսի և սրբոյն Երանոսի խօսքերը, երբ

որ հազարամեայց մոլորութեան պաշտպան կը կենան. և կ'ըսեն՝ որ թէպէտ երեւելի և իմաստուն և բարեպաշտ մարդիկ մեր կարծեացը չեն հաւանիր, բայց մեր կարծիքը այս է։ (Յոսեփոս. պրամաթոս. ընդ Տրիֆոնի. գլ. 81։ — Իրանոս ընդդէմ աղանդոց. գիր. Ե. գլ. 32. 36)։ Այսանկ ըսող հայրապետին խօսքին հետեւիլ չըլլար. ամէն մարդ ազատ է անոր ըսածը քննելու. հակառակելու. և կամ քննելէն ետքը ընդունելու։ Այսանկ խօսողը որովհետեւ իր խելքին կըտրածը կը խօսի՝ կրնայ սխալիլ. քանզի առանձին մարդոց դատումը միշտ կը սխալի։

Բայց երբոր հայրապետը վկայէ որ իր ժամանակի քրիստոնեայները ամէնն ալ իր ըսածին պէս կը հաւատան, և սկիզբէն ալ նոյն հաւատքը շարունակ մինչեւ իրենց օրը եկած է, ասանկ վկայութիւն մէջ հայրապետներուն համար սխալած են չեմք կրնար ըսել։ Թէ որ եկեղեցւոյ հաւատքը այն հայրապետներուն օրը անանկ չէր, և իրենք ասանկ է ըսին նէ՝ խաբեբայ են. ստախօս են. և ասանկ մարդոց համար՝ "որովհետեւ մարդ են, ուստի երբեմն կը սխալին" ըսել չըլլար. շիտակէ շիտակ հետեւութիւն հանելով ըսելու է, թէ չար մարդիկ են. ուստի իրենց ժամանակի եկեղեցւոյն հաւատքին համար սուտ վկայութիւն կուտան. և մեզ կը խաբեն։

Օրինակ առնումք այս տեղ՝ որ Օգոս-

տինոս Հայրապետը։ Որովհետեւ մարդ է՝ կըրնայ ըլլալ որ մանաւոր սխալմունքներ ունենայ վարդապետական խօսքերուն մէջ։ Բայց երբ կը գրէ որ “Մինչեան քաղաքը՝ մեր „ալ հոն գըտնըված ատենը՝ կոյրի մը աչք „բացվելով եղած հրաշքին շատ մարդ ծա„նօթ է. որովհետեւ քաղաքը մեծ է. և „այն ատենը Կայսրն ալ հոն էր. և բանին „ըլլալուն՝ անհամար բազմութի վկայու„թիւն կուտան. երբ որ նը Պրոտասիոս „և Գերուասիոս մարտիրոսներուն մա„սունքներուն ուխտի կ’երթար ժողովուր„դը։ Անոնց մարմինը առաջկուց ծածկը„ված, և գրե՛թէ բոլորովին մոռցըված է„ին. և Ամբրոսիոս եպիսկոպոսին երազը „գալով երեւան ելան։ Ահա այն տեղ այն „կոյրը հին խաւարը մէկ դի ձգեց, ու ա„բեւուն լոյսը տեսաւ (Յաղագս Հաղարին „սպասաւորաց. իբ. 8)„։ Երբ նը Հայրապետը նոյն գլուխին մէջ՝ նը Ստեփաննոսի մա„սունքովը և բարեխօսութիւնը եղած սքան„չելի բժշկութիւնները կը գրէ, և երբ որ հրաշքին մէկը պատմելէն ետքը կ’ըսէ. “Ռնի մօրը կուսական անխախտ արգան„դէն ծնանելուն, և դրոները գոց մնա„լով աշակերտներուն գըտնըված սենեա„կը մըտնելուն չի հաւատացողները այս „հրաշքիս ալ չեն հաւատար։ Բայց ա„սոր ետեւէն Թոզ խնան. և թէ որ ասի„կայ Ճշմարիտ գըտնեն նէ՝ մէկալներուն

„ալ թող հաւատան։ Ահա հրաշքը տես-
„նող կինը երեւելի է. ազատ մարդու աղ-
„ջիկ. ազատ մարդու հետ կարգուած.
„Կարթագինէ քաղաքին մէջ կը բնակի.
„քաղաքը ընդարձակ է. և սանկ երե-
„ւելի հռչակաւոր տիկին մը հոն անյայտ
„չի կրնար մնալ։ Այն մարտիրոսը՝ ո-
„րուն բարեխօսութեամբը այս կինս բը-
„ժշկուեցաւ, միշտ կուսին որդւոյն հա-
„ւատաց. գոց գռներով առաքեալներուն
„քովը մնտնողին հաւատաց. և այլն „։
(անդ)։ Երբ սուրբն Օգոստինոս այսպիսի
բաներ կը գրէ. և աչքովս տեսայ ըսելէն
զատ ուրիշ վկայներու բազմութիւն ալ
կը ցուցնէ նէ՝ նը Օգոստինոս "որովհետև
մարդ է, ուստի սխալեր է" ըսելը ծաղ-
րական զրուցվածք մը կ'ըլլայ։ Կամ ըսած-
ներուն ճշմարիտ ըլլալուն հաւատալով
շնորհակալու մտոք Աստուծոյ երկրպագու-
թիւն ընելու է, որ իրեն սուրբերուն մար-
մինէն մնացած կտորներովը սանկ հրաշք-
ներ կ'ընէ եղեր, կամ սուրբ Օգոստինո-
սի համար ըսելու է թէ՝ չէ՛ թէ միայն սը-
խալական, այլ և խաբեբայ էր, որ չի տե-
սած բանը տեսայ կ'ըսէր. և չէ՛ թէ լոկ
խաբեբայ, այլ անամօթ խաբեբայ էր, որ
մեծ քաղաքի մը ամբողջ բնակիչները, և
Կայսրը անգամ՝ իրեն սուտ վկայ կը բը-
նէր. անանկ բանի մը համար որ ո՛չ ինքը
տեսած էր և ո՛չ թագաւորը և ո՛չ ուրիշ

մարդ։ Հայրապետներուն համար՝ մարդ են կը սխալին ըսել կ'ըլլայ, բայց հաւատացեալները խաբելու համար սուտ կը խօսին՝ և իրենց ըսած սուտն ալ սուտ վկայներով կը հաստատեն ըսելը տակաւին ոչ Տայլէէն լսած և կարդացած ունիմք, և ոչ ուրիշ նորաղանդներէն [1]։ Մ'եր ալ այս երկրորդ մասինս մէջ հայրապետներէն ուզած վկայութիւնս՝ չէ թէ իրենց մասնաւոր և առանձին կարծիքը ինչ ըլլալը հասկընալու վրայ է, այլ իրենց ատենը եկեղեցւոյ հաւատքը ինչպէս ըլլալը հասկընալու համար է։

Նորաղանդները թէպէտ եկեղեցի և աւանդութիւն և հայրապետ չընդունիլ կը կեղծեն, բայց իրենց խիղճը զիրենք կ'ստիպէ որ ընդունելու է. և ուծաշունչ գրոց մէջ ամէն հաւատալիք մի ըստ միոջէ յայտնի գրուած չըլլալուն՝ և աւանդութիւնը քրիստոնէական հաւատոց ուսուցիչ ըլլալուն՝ նոյն սուրբ գրոց մէջ վկայութիւն չունենայինք ալ նէ, 'ի հարկէ ծանը պիտի գար ըսելը թէ այնքան ատեն այնքան տեղ այնքան հաւատացեալ այս

[1] Լ.բ.ի.ը անուն Սոկինեան աղանդաւոր մը թէ մէյն Օգոստինոսի և թէ սրբոյն Ամբրոսիոսի համար ըսած է՝ որ մէկ բարեպաշտ խաբէութիւն մը բանեցուցին ասանկ սուտ պատմութիւններ շինելով. բայց այն չըսեր թէ ինչ ճամբայ բռնեցին որ ցրցուցած վկայնին ալ իրենց ըսածին վկայութիւն տայ. և մէկն ալ չըսէ որ՝ սուտ կը խօսիք. մենք անանկ բան տեսած չունիմք։

բանս սասանկ ըսելով սխալեցան , միայն ես չի սխալեցայ . և չի սխալելէս զատ՝ անանկ դատում մը ունիմ որ ուրիշներուն սխալելուն կամ չի սխալելուն անվրէպ դատաւորն է . ով որ իմ ըսածիս պէս ըսէ նէ սըխալած չըլլար . ուրիշ կերպ ըսողները սըխալած կ'ըլլան : Անանկ ըսելը՝ իր անձը ճծացընել է . և իրեն մասնաւոր խօսքը իբրեւ ճծային պատգամ ծախել . որ կըլլլվելու բան չէ : Ուստի նորաղանդները՝ այս բանիս վրայ եկեղեցին (այսինքն՝ քրիստոնեայները ամէնը մէկէն) սխալեր է ըսելուն չապաւինելով՝ փախուստի ճամբայ կը փնտրուեն . հաղորդութիւն խորհուրդը Ռոմի ճշմարիտ մարմին և արիւն է ըսելը նորահնար վարդապետութիւն է կ'ըսեն . հին ատենները եկեղեցին այս վարդապետութիւնս չունէր կ'ըսեն . և եկեղեցական պատմութիւնը ըսած խօսքերնուն վկայ և հաստատութիւն կը բերեն :

Բայց երբ հնարված է , և ով է այս բանս հնարողը և այնքան քրիստոնէից կըլլեցընողը : Այս երկու խնդրոյս վրայ նորաղանդներուն կարծիքը միակերպ չէ : Ոմանք կ'ըսեն թէ՝ իններորդ դարուն մէջ Պասքասիոս անուն կրօնաւոր մը հնարեց և երեւան հանեց այս վարդապետութիւնս : Այլ ոմանք կ'ըսեն՝ թէ Իննովկենտիոս երրորդ Հռոմայու հայրապետին օրը հնարվեցաւ . որ 1198 էն մինչեւ 1216 թուա-

կանը քահանայապետութիւն ըրաւ . և հաւանութիւն տալով վճռեց։ Մէկ մասնաւոր խօսք մըն ալ հանած են ոմանք . որպէս թէ այս վարդապետութիւնս հնարողը՝ Միքայէլ անուն մէկն է եղեր։ Բայց մենք այդ Միքայէլը ամենեւին չեմք ճանչնար կոր թէ ո՞վ է և ի՞նչ է ազգաւ և ի՞նչ աստիճանի տէր է, և ո՞ր ժամանակի մարդ է . միայն սանկ մէկ անուն մը ականջնիս հասած է . ուստի մինչեւ որ ասոր վրայ կատարեալ տեղեկութիւն ունենամք նէ՝ ասիկայ թող կենայ . և հրամանքդ ալ՝ այս Միքայէլը մեզի անծանօթ ըլլալէն մի՛ հետեւցներ որ՝ ուրեմն եկեղեցական պատմութեան տեղեակ չես . քանզի եկեղեցական պատմութիւնը այս վարդապետութիւնս ո՛չ նոր հնարված ըլլալը գիտէ, և ո՛չ հնարողին անունը։ Աղանդնին հաստատելու համար եկեղեցական պատմութեամէջ ձեռք խօթողներուն ալ ըրածը չեմք կրնար գիտնալ . որովհետեւ հին մատենագիրներէն ատոր վրայօք տեղեկութիւն առած չեմք։ Ուստի մեր խօսելիքը կը մնայ Պասքասիոսին և Իննովկենտիոս երրորդին վրայ։

Որովհետեւ նորաղանդներէն ոմանք այս վարդապետութեանս սկզբնաւորութիւնը ասոնց մէկին՝ և ուրիշները մէկալին կուտան, քանի մը նորաղանդ մատենագիրներ այս երկու կարծիքս միաբանելով կ'ըսեն

թէ՝ Պասքասիոս հնարեց. և Ինոմկենտիոս ժողովքով հաստատեց։ Պասքասիոս կրօնաւորը՝ փրկչին 831 թուին՝ յատուկ այս նիւթոյս վրայ ճառ մը շինեց. ճառին մէջ քանի մը զրուցվածքներ անսովոր երեւելով՝ անոնց վրայ վէճ եղաւ. և Ռադրամնոս անուն ուրիշ կրօնաւոր մը՝ ճառին դէմ գրեց։ Պասքասիոս ուղղափառ վարդապետութիւնը հաստատելով իր ճառին մէջը՝ կ'ըսէր որ, հաղորդութեան խորհրդով մեր ճաշակած մարմինը՝ նոյն իսկ սուրբ Կոյսէն ծնած մարմինն է։ Այս խօսքերս Պասքասիոսին յատուկ չէր. Պասքասիոսէն շատ առաջ՝ հայրապետները ասանկ բացատրած էին. և վարը պիտի տեսնես իրենց կարգաւոր սուրբ Երանոսին և սրբ Յովհան ոսկեբերանին խօսքերը. և մեր սուրբ Գրիգոր Նարեկացիին խօսքը. որ թէպէտ ժամանակաւ հարիւր տարիի մը չափ Պասքասիոսէն ետք է, բայց անոր շինած ճառը տեսած չի կրնար ըլլալ. որովհետեւ այն ատենները Հայք Լատինացւոց հետ հաղորդութի չունէին։ Ռադրամնոս կ'երեւի որ հայրապետաց գիրքերը Պասքասիոսի չափ կարդացած չէր. ուստի՝ թէպէտ Քրիստոսի հաղորդութեան խորհրդոյն մէջ ներկայ գտնվիլը չէր ուրանար, բայց Պասքասիոսի խօսքերը իրեն անսովոր գալով դատապարտութիւն ըրաւ։ Պասքասիոս ասոր վրայ Ֆռուտիկառտոս

անուն կրօնաւորին գրած նամակին մէջ կ՚ըսէ . «Թէպէտ իրական ներկայութեան
» վրայ քանի մը հոգի տգիտութիւն կը մո-
» լորին , բայց տակաւին անանկ մէկը չէ՛
» երեւցած որ այս բոլոր աշխարհքի մէջ
» հաւատացված և ամէնուն խոստովանած
» բանին յայտնի դէմ կենայ » ։

Բայց Ադրամելեքի՝ որուն համար նորաղանդները կը կարծեն թէ իրենց աղանդոյն հաստատութիւն է , իրենց մէկ երեւելի օգուտ մը ընելիք չունի ։ Անակտէպուրկի դարապետում ըսված եկեղեցական պատմութիւնը , որուն հեղինակները ամէնն ալ լուտերական են , ինչերրորդ դարու չորրորդ գլուխին մէջ կ՚ըսէ որ՝ այն ճառին մէջ Ադրամելեք գոյափոխութեան վարդապետութեան սերմունքը ցանած է ։ Եւ յիրաւի այս ճառիս մէջ կը ցրցընէ հաղորդութեան խորհրդով ներկայ եղած Քրիստոսի մարմինը գոյացութեան կողմանէ բուն մարդկային մարմին . և երեւելի յատկութիւններուն կողմանէ մարդկային մարմնոյ յատկութիւններէն շատ տարբեր . և այսպէս մէկ կողմէն մտածելով կրնայ ըսվիլ ճշմարիտ մարմին . և մէկ կողմէն ալ մտածելով , այսինքն՝ զգալի յատկութիւններուն կողմէն նայելով , խորհրդական կ՚ըսվի ։ Գոյացութեանը նայելով՝ սուրբ կոյս Մարիամէն ծնած մարմինն է կ՚ըսվի . եղանակին և

հանգամանքներուն նայելով՝ ասիկայ Քրիստոս իրեն աստուածական ամենազօր խօսքովը իրեն մարմին ըրաւ կ՚ըսվի. որ ձեւերու և օտար տեսակներու մէջ պահված ըլլալով՝ միայն հաւատքով կը ճանչցըվի։ Այս երկու միտքս իրար չեն հերքեր. քանզի իրարու հակառակ ալ չեն դար. մէկը գոյութեանը կը վերաբերի, մէկը տեսակին կամ դրրսէն երեւցած ըղգալի հանգամանքներուն։

Բայց Պասքասիոսի և Ռադրամնոսի օրը եղած վէճը այս երկուքիս վրայ էր։ Պասքասիոս գոյութեանը նայելով՝ սուրբ Կուսէն ծնած Քրիստոսի մարմինն է հաղորդութեան խորհուրդը կ՚ըսէ։ Ռադրամնոս՝ արտաքին հանգամանքներուն և փոխարկութեան կերպին և նախկին նիւթոյն նայելով՝ այսպէս ըսելը անոր ծանր կ՚երեւէր։ Բայց երկուքն ալ միապէս կ՚ընդունէին որ հաղորդութեան խորհրդոյն մէջ՝ հացն ու գինին Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն կ՚ըլլան։ Ինչպէս որ՝ թէպէտ արդարները յարութիւն առած ժամանակին բուն իրենց մարմնովը յարութիւն պիտի առնեն, այսինքն՝ այն մարմնովը որով աշխարհքիս մէջ ապրեցան և մեռան, բայց Պօղոս առաքեալը այս մարմնոյս համար խօսելով՝ անանկ կը ցրցընէ, որպէս թէ մեռնող և թաղվող մարմինը չէ՛. և սերման նմանութեամբ բացատրելով կ՚ը-

սէ. «Զոր սերմանեան՝ ոչ զնոյն մարմին զոր ծնանելոյն իցէ՝ սերմանես» (Ա. Կրն. ԺԵ. 37)։ Զմանաւանդ հաղորդութիւն խորհրդով ճաշակված մարմնոյ և արեան համար ալ կրնար ըսվիլ թէ Աստուածածնին կուսական արգանդէն ծնած մարմինը չէ. թէպէտ էութեամբ նոյնն է. ինչպէս որ յարութիւն առնելու մարմիններս ալ էութեամբ այս հիմակվան մարմիններս է. հանգամանօք կը փոխվի։ Ուադռամնոսի միտքը այս էր։

Ուստի այն առենվան ուղղափառ վարդապետներուն ամէնուն ալ մարմնոյ և արեան վրայ հաւատքը մէկ ըլլալով՝ բացատրութեան վրայ տարբերութիւն ունէին. ոմանք Պասքասիոսի հետ կ'ըսէին որ հաղորդութիւն խորհուրդը՝ սուրբ Կուսէն ծնած մարմինն է. ուրիշները Ուադռամնոսին կուսակից ըլլալով՝ այն չէ կ'ըսէին։ Եւ ասոր այսպէս ըլլալուն զօրաւոր նշան մը այն ունիմք, որ թէպէտ այս երկու վարդապետաց մէջ ասանկ վէճ եղաւ, երկուքն ալ իրարու հակառակ գրեցին, բայց ոչ Պասքասիոսի ըսածը դատապարտեցաւ իբրեւ հերետիկոսական, որ չէր կրնար ալ դատապարտվիլ, ինն դարու չափ առեն եկեղեցին այն հաւատքին վրայ ըլլալուն համար, և ոչ ալ Ուադռամնոս դատապարտեցաւ, որ թէ որ Պասքասիոսի հակառակ հաւատք ունենար նէ,

դատապարտվելու էր՝ ինչպէս որ մեռա-
սաներորդ դարուն մէջ դատապարտվե-
ցաւ Իերենգարիոս քանի մի անգամ ժո-
ղովքներով։

Այց թէ որ այս իրական ներկայութիւն
վարդապետութիւը առաջին հնարողը Պաս-
քասիոս էր նէ՝ Անակտէպուրկի լուտերա-
կան աստուածաբանները անոր հակառակ
գրող Ադռամնոսին գրքին մէջ ինչպէս
գոյափոխութիւն սերմ գտեր են։ Ինչպէս
Ինոովկենտիոս Հռոմայ հայրապետը Պաս-
քասիոսին ճառը չինելէն 380 տարիի չափ
ետքը կ'ելլէ այն ճառին պաշտպան կը կայ-
նի. որ այնքան ատեն մոռցրված ալ պիտի
ըլլայ. որովհետեւ առաջկուց չեղած նո-
ր ելուկ վարդապետութիւն մը՝ նոր ելած
ատենը հաստատութիւն գտնելու է. կամ
գտնէ՝ այն ատենէն սկսելու են հաստա-
տութիւն տալու. և այն հաստատութիւն
տուողին անունը զրուցվելու է։

Ինչ և իցէ. նորաղանդները հաւատոյ
այս մասին հնարվիլը իններորդ դարուն
մէջ, և հաստատութիւն գտնելը երեքտա-
սաներորդ դարուն սկիզբները ցրցընելով,
ասոնցմէ ետքը եկեղեցւոյ մէջ այս հա-
ւատքիս գլտնվելուն հակառակութիւն
չեն ըներ. ուստի մենք ալ հայրապետաց
վկայութիւնները մինչեւ Պասքասիոսի և
մինչեւ երրորդ Ինոովկենտիոսի օրը կը հաս-
ցընեմք. որպէս զի յայտնի երեւի՝ որ ինչ-

1008
35230
1875

պէս որ Ինոնվկենտիոսի օրը եղած ժողովքին խօսքը և վճիռը Պասքասիոսի խօսքին համեմատ է, նմանապէս Պասքասիոսին ալ իրմէ առաջ եղողներուն. որով կը հասնի մինչեւ առաքելոց ժամանակը, որ այս վարդապետուիս նոյն իսկ Քրիստոսի բերանէն լսեցին. և խորհուրդը կատարելուն պատուէրը անկէց առնելով իրենց յաջորդներուն ալ աւանդեցին. և մինչեւ մեզի հասցուցին, և մինչեւ աշխարհքիս վերջը պիտի հասցունեն։

Թէ որ այս լսածներս այս մասինս մէջ գրվածներովը հաստատվի՝ նոյն իսկ նոր բաղանդներուն ալ եկեղեցիէն զատվելուն մէկ օրինաւոր պատճառ մը չի մնար. որով հետեւ այս բանիս վրայօք ալ՝ որ իրենց մէկ մեծ պատճառ մը բրնած են, եկեղեցւոյ հաւատքը նոր եղած չըլլար. ուստի ամէնուն ալ հարկ կ'ըլլայ ընդունիլ իբրեւ նոյն իսկ Քրիստոսի վարդապետութիւն։ Այս հարկս մասնաւորապէս հրամանոցդ կ'ինայ՝ քանի մը պատճառներով։ Նախ՝ անոր համար որ 'ի սկզբանէ հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ մէջ այս հաւատքովս վարժվեր ես. և եւքը՝ եկեղեցական գիտութեց վարժ չըլլալուդ համար օտարահաւատներուն վարդապետութիւնը շիտակ կարծելով, և հաւատոյ բաները անոնք աղէկ գիտեն ըսելով խաբվեր ալ ես նէ՝ քուկին բարեսիրութիւնդ

և հոգեսիրութիւնդ և կրօնասիրութիւնդ
և ազգասիրութիւնդ չի թողուր որ այս
կերպով եկեղեցւոյ հաւատոյն հաստա-
տութեանը տեղեակ ըլլալէդ ետքն ալ՝ աշ-
խարհական դիտմունքներու ծառայելով՝
յամառիս. և փրկութեան ճամբէն ետ
մնացած ըլլալդ գիտնալով՝ տակաւին այն
ճամբան մտնելու հոգ չընես։ Երկրորդ՝
սուրբ գիրքը կարդալու և անոր վրայ մը-
տածելու սորված ըլլալովդ, կը յուսամ
որ՝ երբոր աչքիդ և մտացդ առաջը վա-
րագոյր քաշող ձեռքը հեռացընես, և
մասնաւոր մարդիկ քեզի առաջնորդ չըն-
դունելով՝ 'ի մանկութենէ սորվածիդ վրայ
մտածես նէ՝ նոյն իսկ աստուածային բանը
միտքդ կը լուսաւորէ. որովհետեւ այն ա-
ռաջին ուսմանդ վրայ մնալով՝ եկեղեցւոյ
անդամ եղած կ'ըլլաս. և եկեղեցւոյն ամե-
նայն ճշմարտութեամբ առաջնորդող Հո-
գին սուրբ՝ քեզ ալ նոյն լուսաւորութիւնը
հաղորդ կ'ընէ։ Երրորդ՝ 'ի հարկէ՝ ինչպէս
որ խոստացար, այս գրութիւններս մտադ-
րութեամբ պիտի կարդաս. պատասխան
տալու խօսք գըտնելու համար միտք պի-
տի հոգնեցընես. և Ս. Գ. բարեկամիդ
գրած նամակներուն դէմ խրրկած և տը-
պած պատասխաններուդ պէս տարտամ և
աննշան պատասխաններ տալով պիտի չի շա-
տանաս, որուն անունը միայն խատասխան
է, և ինքը բոլորովին ուրիշ բան է. Ս.

Ա. բարեկամիդ գրածներուն պատասխան չէ. այնքան որ՝ չեմ կարծեր թէ հրամանոցդ գործը ըլլայ անիկայ. թէպէտ ըստորագրութիւնը քուկդ է։ Ի՛նչ և իցէ. այս ճառերուս անոնց պէս պատասխանը ընդունելի չըլլալը գիտնալով՝ տալու պատասխանդ ճիշդ ըլլալուն քիչ մը աւելի պիտի աշխատիս. և այս աշխատութիւնդ ալ քեզի ճամբայ մը պիտի բանայ եկեղեցւոյ հաւատքին ճշմարտութիւնը հասկընալու և ընդունելու։ Զորրորդ, և ամէնէն աւելի հաստատուն յոյսերնիս այս է՝ որ հրամանոցդ մոերիմ և անկեղծ բարեկամներուն ջերմեռանդ աղօթքը հոգւոյդ փրկութեանը համար՝ Աստուած կը լսէ. յատկապէս իր շնորհքովը միտքդ կը լուսաւորէ. կ'ըսկսիս նորաղանդներուն աղանդոյն մէջ պարունակեալ հակասութիւնները տեսնել և խրտչիլ. սէր քարոզողներուն հաւատոյն հիմը՝ եկեղեցւոյ դէմ ատելութիւն ըլլալը տեսնել և հեռանալ. ամէն մարդ իր հաւատքը սուրբ գիրքէն պիտի սորվի ըսողներուն մէջ շատցած իրարու հակառակ հաւատքները տեսնել և լսել՝ և անոնցմէ երես դարձընել։ Դանդի երբ հրամանոցդ հետ խօսակցութեամբ բրս իմացայ՝ որ Դրօթէսթաններուն մէջ, այսինքն՝ հաւատքնիս անմիջապէս սուրբ գիրքէն կը սորվինք, և սուրբ գիրքը հաւատոց կատարեալ և անսխալ կանոն է

ըսողներուն մէջ՝ Քրիստոսի Աստուած և Արդի աստուծոյ ըլլալը չընդունող գրոնը-վիլը չէս գիտեր, Սօսինեան և Ռաձիօնա-լիսդ ըսված Բրոթէսթաններուն դաւա-նութեանը տեղեակ չէս, մեծ յոյս առի-քու բարեպաշտութեանդ վրայ, որ ա-սանկ աղանդներ և իրարու դէմ հաւատք-ներ պարունակող Բաբիլոնէն ելլելով՝ որ ամէն անսուրբ և ատեցեալ ոգիներուն պահպանութիւն բանտ մը եղած է, (Յայտն. ԺԸ. 2), Քրիստոսի եկեղեցւոյն մէջ կու-գաս կ'ապաւինիս. որ Աստուծոյ տունն է (Ա. Տիմ. գ. 15). և Աստուծոյ արքայու-թիւնը (Մատթ. ԺԳ. 41)։ Այսոնք կատարե-լու ուրիշ բան չէս ուզեր, բայց եթէ նո-րաղանդներուն հաւատքին և վարդապե-տութեանցը աղէկ մը տեղեկանալ. և ստու-գել՝ որ այդքան խառն'ի խուռն վարդապե-տութիւնները ամէնն ալ՝ սուրբ գիրքէն հաւատք փնտրելով՝ սուրբ Հոգւով ա-ռաջնորդված եկեղեցիէն զատվողներուն մէջ կ'ըլլայ։

ՄԱՍ Բ.

ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ Ա.

Հաղորդութեան վրայ Եկեղեցւոյ հաւատքը Առաքելոց օրէն մինչեւ հիմա միակերպ է։

ՍՈՒՐԲ գիրքը նոր հնարված չէ, չեմք կրնար ըսել թէ սուրբ գիրքը գրողներուն ժամանակին մօտ եղող մարդիկ անոնց միտքը աղէկ չէին հասկրնար, քանի մը հարիւր տարի է որ աղէկ հասկրցվիլ սկսաւ։ Անոր համար սուրբ գրոց խօսքին մտքին վրայ երկբայութիւն մը ըլլայ, և այն երկբայութիւնը սուրբ գրոց ուրիշ տեղերուն խօսքերովը չի լուծվի նէ՝ օրինաւոր է նոյն սուրբ գիրքը կարդացողներուն հարցընել թէ ինչպէս հասկրցեր են. և իրենց այնպէս հասկրցածին նման ո՞վ կայ հասկրցող. և հին ատենէն 'ի վեր ինչպէս կը հասկրցվի եղեր[1]։

[1] Ասանկ բաներու վրայօք հին հայրապետաց վկայութիւնը ընդունելի ըլլալը Տայլէ ալ կը խոստովանի վերոյ յիշեալ գրքին մէջ՝ այս խօսքով. "Հէր քէս իբրար էտէր "քի՝ առաքեալլարա էն եագըն օլան զէման՝ կէրէք ի'թի- "գատոէ վէ ային ու ա'տէթլերոէ՝ վէ կէրէք քրիսթիան "թալիմինոէ էն աղ պօղուգլուղա մուպթէլա օլմալը։ "Զիրա էյէր քիլիսէլէրոէ պօղուգլուգլար պուլունույօր "իսէ՝ աղար աղար օլմուշլար տէյիւ թահմին էթմէյէ հագ-

Հիմա մեր վէճը Քրիստոսի «Այս է մարմին իմ և այս է արիւն իմ» խօսքերուն մոքին վրայ է թէ ինչպէս հասկընալու է։ Սուրբ գրոց ուրիշ տեղերէն ասոնց միտքը բացված է. բայց հաւատալ չուզողները՝ այլաբանութի՞ւն է կ'ըսեն. ինչպէս որ Զաքարու յարութեան պատմութեանը համար ալ այլաբանութիւն է ըսող կայ. ինչպէս որ Քրիստոսի ես Որդի աստուծոյ եմ և Հօր աստուծոյ հետ մէկ եմ ըսելուն այլաբանութիւն է ըսող կայ. և այս այլաբանութիւն հասկընալը անանկ մէկ բան մըն է որ՝ մարդ մը ասիկայ ձեռք առնելով՝ Քրիստոսի ծնանելուն ալ, մկրտվելուն ալ, սքանչելիքներուն ալ, խաչ ելլելուն ալ, յարութիւն առնելուն ալ, համբառնալուն ալ, հին և նոր կտակարանին ամէն պատմութիւններուն ալ և ամէն պատուիրանքներուն և օրէնքներուն ալ այլաբանսա՞ի է կրնայ ըսել. ինչպէս որ ձեր ընկերներէն մէկը նոր կտակարանի գիրքը գոցելով և կողքին զարնելով՝ բազմախումբ հանդէսի մէջ՝ որ հրամանքդ ալ հոն գըտ-

«գըմըզ եօգ տէյիլ տիր» (Հայրապետաբեր. թղթ. 6)։ Եկեղեցւոյ աւրվելուն վրայ ըսածը թէպէտ սուտ խօսք է, բայց իրեն աղանդը հաստատելու համար անանկ ըսել հարկ եղած է. մեզի այնքանը բաւական է՝ որ վկայութի՞ կուտայ թէ առաքեալներուն մօտ եղած ժամանակը եկեղեցւոյ վարդապետութիւնը փլուզված է. մենք ալ վկայութիւնները այն ատենվան հայրապետներէն սկըսած ենք։

նրվեցար , «Ամենք սոր մէջ գրվածնե-
»ըը ամէնն ալ այլաբանութիւն գիտեմք»
ըսաւ ։ Եւ այս կերպով այլաբանութիւնը
քրիստոնէական հաւատոց և բարոյականի
և աւետարանական օրինաց հիմը կը խախ-
տէ ։ Բայց սոնց այլաբանութիւն է ըս-
վելուն պատճառը՝ ուրիշ պատասխան մը
չի կրնար գտնել, և ըսած խօսքին վրայ
յամառիլն է . ուրիշ բան չէ ։ Այս յա-
մառութիւնս ինչ գէշ բան ըլլալը՝ բերած
պտուղէն յայտնի կ'երեւի ։

Ուստի այդ պատասխանն ալ ջրելու
համար հարկ կ'ըլլայ տեսնել՝ թէ առաքե-
լոց օրէն մինչեւ հիմա հայրապետները ինչ-
պէս կը բացատրեն , որ եկեղեցւոյ հաւա-
տոց թարգմանն ու վկայներն են . և սուրբ
գրոց խօսքին ասկէց հաստատուն վկայու-
թիւն չըլլար , որ առաքեալներուն օրէն
մինչեւ հիմա շարունակ և միակերպ՝ ա-
սանկ մէկ խելքէ մըտքէ դուրս բանի մը
վրայ մէկ հաւատք ըլլնըվի . և մինչեւ
իններորդ դարը , այսինքն՝ մինչեւ Պաս-
քասիոսին օրը մարդ չի հակառակի սոր ։
Եւ Ռադռամնոս անոր հաւատքին հակա-
ռակ հաւատք կը կրէր և կը քարոզէր ալ՝
(որուն համար վերը ըսինք թէ հաւատոյ
կողմէն Պասքասիոսի պէս էր , բացատրու-
թեան եղանակը միայն կը տարբերէր) , ա-
նոր հակառակելուն մարդ ականջ չի դնե-
լով նոյն հաւատքը շարունակէ մինչեւ

Ներենգարիոսի օրը. որ այն ալ Թէպէտ Քրիստոսի մարմնոյն և արեան իրական ներկայութիւնը չէր ուրանար, բայց հացը Քոի մարմին և գինին Քոի արիւն չըլլար կ'ըսէր. ասոնց գոյացութիւնը նոյն մնալով՝ Քրիստոս ալ իր մարմնով և արեամբը այն հացին և գինիին մէջ կ'ինչնայ և ասոնց հետ կըմիանայ կ'ըսէր. ասոր ասանկ ըսելուն բոլոր եկեղեցին հակառակի. ժողովքները ըլլան Վէրչէլի, Փարիզ, Թուռ և Հռոմ քաղաքները. աղանդը դատապարտեն. Ներենգարիոս ինքն ալ կըրկին և կրկին իր խօսքը ետ առնէ։

Ուստի այս գլուխիս մէջ եկեղեցւոյ վարդապետութիւնը եկեղեցւոյ հայրապետաց և վարդապետաց վկայութիւնը հաստատելով կարգաւ պիտի հասցունեմք մինչեւ Ինովկենտիոս Գ. Հռովմայ հայրապետին օրը. որ է ԺԳ դարուն սկիզբը։ Եւ այս պիտի ըլլայ գլխոյս առաջին յօդուածը, որ քիչ մը երկար ըլլալուն համար դար դար կը բաժնեմք. և այս անգամ վկայութեց կարգը մինչեւ երրորդ դարուն վերջը կը հասցընեմք, և ասկէց ետքը տրպվելու տետրակներուն մէջ՝ չորրորդ դարէն սկըսանելով մինչեւ ԺԸ երորդ դարին վերջը վկայութիւնները շարունակելէն ետքը՝ այս գլխոյս երկրորդ յօդուած կ'ընեմք նորաղանդ մատենագրաց վկայութիւնը, Լուտերէն սկսելով մինչեւ Ռիւզէյ անգլիա-

ցին, որ հիմակվան ատենը Օքսֆըռտ քաղաքի համալսարանին երեւելի ուծաբաններէն մէկն է. և այս ալ երկրորդ յօդուածն է։ Յաջորդ գլուխին կը մնայ այս հաւատքս չընդունողներուն վարդապետութեանց մէջ մտած փոփոխութիւններուն պատմութիւնը։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Եկեղեցւոյ հարց և վարդապետաց վկայութիւնները։

ԳԼԽ Բ.

1. ՍՈՒՐԲ ԻԳՆԱՏԻՈՍ

Այս սուրբը հայրապետիս համար աւանդութիւն կայ՝ որ Քրիստոսի տեառն մերոյ ժամանակը տղայ ըլլալով՝ անմիջապէս Քրիստոսի աստուածային բերնով օրհնեցաւ. և առաքեալներուն օրինակ տըրվեցաւ տղայական անմեղութեան. որ մինչեւ որ անոր նման անկեղծ պարզմտութի չունենան նէ՝ երկնից արքայութիւնը պիտի չի մտնեն (Մատթ. ԺԸ. 2. 3. 4.)։ Ուստի սուրբը Ոսկեբերանն ալ առաքեալ կ'ըսէ ասոր։ Նահատակութիւնն է՝ Քրիստոսի 107 թուին. Քրիստոսի խաչելութենէն 70 տարիի չափ ետքը։ Եպիսկոպոսութեան ժամանակին համար՝ ոբն

Յովհան ոսկեբերան, և Աղեքսանդրեան ըսված ժամանակագրութիւնը՝ որ եօթնեբորդ դարուն մէջ շինված է, և Եվսեբիոս ու ուրիշ Յոյն հեղինակներ՝ առաքելական սահմանադրութեանց գրքէն առնելով (Գր. Է. 46), կ'ըսեն թէ Պետրոս առաքեալ Անտիոքէն ելլելու առեն ասիկայ Անտիոքայ եպիսկոպոս ըրաւ. և սուրբ առաքելոյն Անտիոքէն ելլելը Քրիստոսի 43 թուին ըլլալով՝ սուրբ Իգնատիոս ալ այն առենէն Անտիոքայ եկեղեցին հովուել սկսաւ սուրբ Եւոդիոսի հետ. և 68 թուին Եւոդիոս նահատակելով՝ սուրբ Իգնատիոս մինակ եպիսկոպոսութիւն ըրաւ մինչեւ իր մահը։ Ասոնք անոր համար հոս կը զրուցենք, որ հասկըցվի թէ ինչ ժամանակի մարդ է, և հաւատքը որկէց առած է։

Ասոր օրովը Օմիւռնիա և Եփեսոս և փոքր Ասիայի այլ և այլ տեղեր Գնոստիկեան աղանդաւորները տարածված էին. որ լատիներէն Տօչեդի կ'ըսվին. և հայերէն՝ հմուտք կամ իմաստուն ըսել է։ Ասոնք չէին հաւատար թէ Քրիստոսի մարմինը մերինին պէս ճշմարիտ մարմին է. այլ միայն աչքի անանկ կ'երեւէր. ճշմարիտ մարմին չունէր կ'ըսէին. Քրիստոսի յայտնի խօսքին դէմ, որ ըսաւ. "Շօշափեցէք զիս և տեսէք. զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի. որպէս զիս տեսանէք՝

„զի ունիմ" (Ղուկ. Իզ. 39)։ Այս վարդապետութեանս համեմատ՝ հաղորդութեան խորհրդոյն Քրիստոս մարմին և արիւն ըլլալն ալ չէին ընդուներ։ Այս ըսածներս նոյն սուրբ հայրապետէն կը սորվիմք՝ որ առ զմիւռնացիս գրած նամակին մէջ կ'ըսէ. "Ո՛չ որպէս ոմանք ասեն, „որք ո՛չն հաւատան եթէ կարծեօք իմն „չարչարեցաւ. որ ինքեանք իսկ են կարծիք. և ըստ իւրեանց մտաց դէպ լինի„ցի նոցա. և եղիցին անմարմինք իբրեւ „զդեւս։ Իսկ ես և յետ յարութեանն 'ի „մարմնի գիտեմ և հաւատամ զտէրն։ „Քանզի յորժամ առ պետրոսեանսն եկն՝ „ասէ ցնոսա. շօշափեցէք զիս և տեսէք „զի ես նոյն եմ, և ո՛չ եմ ոգի առանց „մարմնոյ։ Եւ յայնժամ մերձեցան առ նա „և հաւատացին՝ որք հաղորդեցանն և „ճաշակեցին նախ զմարմին և զարիւն նո„րա. վասն որոյ և արհամարհեցին զմահ" (Թուղթ սրբոյն Իգնատիոսի. Թղթ. 15. 16. Հայ. տպ. Կոստ. 1783)։

Այս խօսքիս մէջ Գնոստիկեանց աղանդոյն դէմ երկու հերքումն կայ. մէկը՝ Քրիստոսի խօսքովը. քանզի միայն երեւոյթ եղած բանը չի շօշափվիր. Քրիստոս ինքը իր մարմնոյն համար ըսաւ թէ շօշափեցէք. ուրեմն՝ լոկ երեւոյթ չէր։ Այս առաջին փորձը՝ մէկ զգալի փորձ մըն էր, որ միայն Քրիստոսի ժամանակակիցները

և տեսնողները ասոր վկայութիւն կընային ընել։ Հերքման երկրորդ ապացոյցը կ'առնէ հաղորդութեան խորհուրդէն, որուն քիչ մը եռքը գոհութիւն, կամ յունարէն Եւխարիստիա կ'ըսէ ինչպէս որ պիտի տեսնենք, աւետարանին այն խօսքէն առնելով՝ որ կ'ըսէ. "Ուրեալ հաց՝ գոհացաւ" (Ղուկ. իբ. 19). և Յոյնք և Լատինք ալ նոյն յունարէն բառիւ այս խորհրդոյս Եւխարիստիա կամ Եւքարիստիա կ'ըսեն։ Ու հոս կ'ըսէ որ՝ Քրիստոսի մարմնոյն ճշմարիտ ըլլալուն հաւատացին անոնք՝ որ Քրիստի մարմինը և արիւնը ճաշակեցին. թէ որ Քրիստոսի ճշմարիտ մարմին ունենալուն չի հաւատային նէ՝ չէին ճաշակեր. ճաշակեցին, և հաւատացին որ ճաշակածնին Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն է. և ասկէց մակաբերեցին, թէ ուրեմն Քրիստոս ճշմարիտ մարմին և արիւն առաւ։ Թէ որ ճաշակածնին Քրիստոսի մարմնոյն օրինակ գիտնային, կամ լոկ հաւատով և հոգեւորապէս Քրիստոսի մարմինը ճաշակած ըլլային, բերաններին առած և կլլած բաներնին Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն չի հաւատային նէ՝ Քրիստոսի մարմնոյն ճշմարտութիւնը ասկէց մակաբերել՝ և Գնոստիկեանց աղանդը ասով հերքելը յարմարութի՞ չէր ունենար. առերեւոյթ մարմնոյ մին ալ օրինակ կընայ ըլլալ մէկ բանը, ճշմարիտ մարմնոյ ալ. և հոգեւորա-

պէս և հաւատով ճաշակումը՝ իրօք գո-
յութիւն չունեցող մարմնոյ առաւել կը
յարմարի. ուստի թէ որ սրբոյն Իգնա-
տիոսի ժամանակին հաւատացեալները հի-
մակիսան նորադանդներուն պէս հաւատայ-
ին նէ՝ ասով Գնոստիկեանց աղանդը հեր-
քքվելուն տեղը աւելի կը հաստատվէր։

Այս խօսքէս քիչ մը ետքը նոյն սուրբ
հայրապետը Գնոստիկեանցհամար կ'ըսէ.
"Ի միտ առէք և զորս օտար են մոռք 'ի շը-
"նորհացն Աստուծոյ. որ ետհաս առ մեզ,
"թէ ո՛րպէս են հակառակ կամացն Աստու-
"ծոյ և սիրոյ նորա... և հեռացեալ են
"'ի գոհութենէ և յաղօթից. զի ո՛չ հա-
"ւատան գոհութեանն՝ որ է մարմին և ա-
"րիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի,
"որ չարչարեցաւ փոխանակ մեղաց մե-
"րոց" (անդ. Ռղբ. 19)։ Գնոստիկեաններ-
ը գոհութենէն և աղօթքէն հեռացած
են կ'ըսէ. քանզի գոհութեանը չեն հաւա-
տար որ մեր մեղացը փոխանակ չարչարանք
քաշող Յիսուսի Քրիստոսի մարմինն ու
արիւնն է։ Անանկ է նէ՝ եկեղեցւոյ հա-
ւատքը Գնոստիկեանց հաւատքին հակա-
ռակ էր. քանզի եկեղեցին կը սորվեցընէր
որ՝ Քրիստոս մարդ եղաւ նէ՝ կատարելա-
պէս մեր մարմնոյն նման ճշմարիտ մարմին
առնելով խաչը ելաւ. մեր մեղացը համար
մեռաւ և անով յարութիւն առաւ. և
նոյն մարմինն է որ գոհութե խորհրդոյն

մէջ կը տրուի. և հաւատացեալները կը ճաշակեն։ Այսոր չի հաւատալնուն համար Գնոստիկեանները՝ գոհութենէն, այսինքն հաղորդութեան խորհուրդէն կը հեռանային։ Եկեղեցին հաղորդութիւն խորհրդոյն մէջ եղած մարմինը և խաչին վրայ մեռած մարմինը էապէս նոյն ըլլալը՝ այն ատենը Իգնատիոսի բերնով, և ինն երորդ դարուն մէջ Պասքասիոսի բերնով միակերպ կը բացատրէր. թէ՛ հաղորդութեան խորհրդոյն և թէ՛ խաչը եղած մարմնոյն վրայ մի և նոյն զրուցվածքը գործածելով. «Մ՛է հաւատան գոհութեանն որ է մարմին և արիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ չարչարեցաւ փոխանակ մեղաց մերոց»։ Եւ այս զրուցվածքս նոյն իսկ Քրիստոսի խօսքէն է որ ըսաւ. «Այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղու 'ի թողութիւն մեղաց» (Մատթ. իզ. 28)։ Թէ որ հաղորդութիւն խորհուրդը և խաչ ելլող մարմինը անանկ մէկ են՝ որ հաղորդութեան խորհրդոյն մէջ գտնվված մարմնոյն համար ալ մեր մեղացը համար չարչարվեցաւ կրնայ ըսվիլ կոր'նէ, ասկէց ըլնապէս կը հետեւի որ՝ թէ որ հացը հաց մնալու ըլլար նէ այս խօսքս անոր համար չէր կրնար զրուցվիլ. հարկ էր որ գոյութիւնը փոխվէր. և ճշմարտապէս մարմին և արիւն ըլլար։ Ուստի այս խօսքս ընդհանուր եկեղեցւոյ վարդապետութեանը

մէկ վկայութիւնն է. որով կը հասկընամք որ՝ հացին և գինւոյն գոյութիւնը կը փոխ-վին, պատարագին սրբագործութեամբը Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն կ'ըլլան։

Անանկ սեպենք որ սրբոյն Իգնատիոսի առենը եկեղեցւոյ հաւատքը հիմակվանին պէս չէր. նորադանդներուն գտած մեկնութեանը պէս էր։ Թէ որ եկեղեցին այն առենը անանկ կը հաւատար որ հացն ու գինին Քրիստոսի շարշարանացը և խաչին և մահուանը յիշատակն է, Գնոստիկեան-ներուն չընդունելու ինչ կար այս տեղս։ Գնոստիկեաններն ալ կ'ըսէին՝ որ Քրիստոս շարշարեցաւ և խաչը ելաւ և մեռաւ. միայն ուղղափառներէն ասով կը տարբերէին՝ որ շարշարանքը և խաչը և մեռնիլը իսկութիւն չէր, երեւոյթ մըն էր կ'ըսէին. յիշատակը ասոր իսկութիւն կամ երեւոյթ ըլլալուն վերաբերեալ յատուկ բան մը չէր պարունակեր. Քրիստոսի մահը պիտի յիշեցնէր. թէ՛ իսկութիւն ըլլայ՝ թէ՛ առաչք. Գնոստիկեանց կարծիքը ըրածին պէս առաչք մարդեղութիւն և խաչելութիւն և մահուան մը յիշատակ պիտի ըլլայ եղեր, իրենց գայթակղութեան առիթ ըլլալու բան մը չի կար։ Սակայն՝ հացն ու գինին սրբագործութեամբ Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն կ'ըլլայ ըսելը ուղղակի անոնց հաւատքին դէմ էր, որ Քրիստոս բնաւ մէկ առեն մը ճշմարիտ մարմին և արիւն չու-

նեցաւ կ'ըսէին. անոր համար հաղորդութեան խորհուրդէն կը հեռանային. և ասիկայ կատարեալ կը բացատրէ սուրբ հայրապետը, գոհութիւն հեռանալնուն պատճառ՝ գոհութիւն մարմին և արիւն ըլլալը չի հաւատալնին ցրցընելով. "Հեռացեալ են 'ի գոհութենէ և յաղօթից. զի ո՛չ հաւատան գոհութեանն՝ որ է մարմին և արիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի":

Սուրբ Իգնատիոս հայրապետին գրուածքները թէ՛ ասով և թէ՛ եպիսկոպոսաց և քահանայից և սարկաւագաց աստիճանին և իշխանութեանը և իրարմէ տարբեր ըլլալնուն վրայ յայտնի խօսելով՝ նորաղանդները ընդունիլ չեն ուզեր։ Բայց որովհետեւ սուրբ Իգնատիոսի խօսքն ալ չընդունիլ չըլլար. քանզի առաքեալներուն խօսքը չընդունելու շատ կը մօտենայ, սուրբ հայրապետը առաքելոց ժամանակակից ըլլալուն համար. ուստի վարպետութիւն բանեցընելով կ'ըսեն որ այս նամակներս սուրբ Իգնատիոսին իրեն գրածները չեն. ուրիշները եղբէն շիներ՝ և անոր անունովը հրատարակեր են։ Այսանկ կ'ըսէ Տայլէ կալվինականը՝ որուն գրքին համար վերը համառօտ տեղեկութիւն մը տուինք։

Թէ որ ասանկ ըսելէն եղբը ապացոյցներով ստուգէին, կամ գոնէ պարզ խօսքովմըն ալ խօսէին՝ թէ իններորդ դարէն եղբը շինվեցան, իրենց գրութեանը

համեմատ կուգար. հաղորդութեան վրայօք եղած եկեղեցւոյ վարդապետութիւնը հնարողը Պասքասիոսն է ըսելնուն հետ կը միաբանէր. բայց իրենք ալ կը վկայեն՝ որ վեցերորդ դարուն մատենագիրները սուրբ Իգնատիոսի թղթերէն վկայութիւն կ'առնեն. անանկ է նէ՝ հաղորդութեան վրայ եկեղեցւոյն հաւատքը Պասքասիոսին հնարածը չէ՛. որովհետեւ անկէց երեք հարիւր տարի առաջ Իգնատիոսի անունով գրուած նամակներն ալ նոյն հաւատքը կը քարոզեն։

Բայց մենք այսքանով չենք շատանար. սուրբ Իգնատիոսի նամակները մեր ձեռքը ինչպէս հասնելուն պատմութիւնը ունինք. ուրիշ վկայներ ալ ունինք այս նամակները անոր ըլլալուն, որ այս տեղս դնենք։

Փիլիպպեցիները սուրբ Պօղիկարպոսին գրեր էին՝ որ փոքր Ասիայի եկեղեցիներուն համար, և սրբոյն Իգնատիոսի ճանապարհորդութեանը վրայօք իրենց տեղեկութիւն խրկէ. և այս սուրբը հայրապետիս այս դիս այն դին խրկած նամակներէն ինչ որ ձեռք ձգել կրցած է նէ՝ օրինակը իրենց խրկէ։ Սուրբ Պօղիկարպոս՝ սուրբ Իգնատիոսի ժամանակը զմիւռնացւոց եպիսկոպոս էր. և սուրբ Իգնատիոս ասոր ալ յատուկ նամակ գրած ունի։ Փիլիպպեցւոց պատասխան կը գրէ սուրբն Պօղիկարպոս. և ասոնց խնդիրքը ընդունելով՝ սրբոյն Իգնա-

տիրոջ գրած նամակներէն ոչքան որ իր ձեռքը հասած էր նէ՝ ամէնն ալ անոնց կը խլրկէ. և ինքն ալ անոնցմէ կը խնդրէ, որ սրբոյն վրայ առած լուրերնին իրեն իմացընեն։ Սրբոյն Պողիկարպոսի առ փիլիպպեցիս գրած նամակը մինչեւ հիմա կը կենայ. և այս ըսածս՝ այն նամակին 13 և 14 գլուխներուն մէջ պատմըված է։ Այս նամակիս համար վկայութիւն կուտան նա և Իւսեբի կեսարացին (Պատմ. եկեղ. գ. 36). և Հերոնիմոս (Յղ. երե-ելք արանց. գլ. 16). և սրբոյն Իգնատիոսի նամակներն ալ կը համրեն. որ սուրբն Պողիկարպոս ժողվեց և փիլիպպեցւոց խրկեց. և ասոնք են. առ Եփեսացիս, առ Մագնեսիացիս, առ Տրաղլիացիս, առ Հռովմայեցիս, առ Փիղադեղփիացիս, առ Օմիւռնացիս, և առ սուրբն Պողիկարպոս։ Ասոնք ամէնն ալ ամբողջ՝ մեր երանաշնորհ թարգմանիչները հայերէն թարգմաներ են հինգերորդ դարուն մէջ. և 1783 թուին Կոստանդնուպոլիս տպված է ուրիշ նամակներով ալ՝ որ սրբոյն Պողիկարպոսի խրկածներուն կարգը չեն. կրնայ ըլլալ որ ուրիշ տեղաց ձեռք անցած են. քանզի՝ սուրբն Պողիկարպոս ոչքան որ իր ձեռքը անցած էր նէ՝ այնքանը միայն խրկեց. և չըսեր որ ասոնցմէ զատ նամակ գրած չունի սուրբը. ինչպէս որ հայերէն օրինակին մէջ նամակ մըն ալ առ Անտիոքացիս կայ՝ որ Պողիկարպոսի խրկած

ներուն կարգը չկայ. բայց չեմք կրնար ըսել որ այնքան քաղաքներուն նամակ գրելով՝ իւր առաջնորդութի ըրած Անտիոք քաղաքին բնակիչներուն գրած չէ։

Այս նամակներէս վկայութիւն կ'առնէ սուրբն Իրանոս, որ Քրիստոսի 202 թուին նահատակեցաւ. այսինքն՝ սուրբ Իգնատիոսէն 95 տարի ետքը. (Ընդդէմ աղանդոց. Ե. 28)։ Որոգինէս ալ վկայութիւն կ'առնէ (Մեկն. Ղ-ի. ճառ. զ). այս ալ Քրիստի 254 թուին մեռաւ. սուրբ Իրանոսէն 52 տարի ետքը։ Հերոնիմոս ալ Յաղագս երեւելի արանց գրքին մէջ յիշելէն զատ՝ Մատթէոսի մեկնութեան առաջին գլխոյն մէջ ալ վկայութիւն կ'առնէ։ Հերոնիմոսի ժամանակակից են մեր թարգմանիչները, որ ինչպէս որ յիշեցինք՝ այս թուղթերը հայերէն թարգմանեցին։ Նոյն ժամանակներն է Թէոդորետոս կիւրացւոց եպիսկոպոսը, որ իր ճառերուն մէջ շատ տեղ այս թղթերէս վկայութիւն կ'առնէ։

Այսքան վկայութիւններուս դէմ նայէ՛ ինչ կ'ընէ Տայլէ։ Որովհետեւ Իգնատիոսի անունով եղած նամակները անորը չեն ըսելը միտքը դրեր է, և սուրբ Պօղիկարպոսին վկայութիւնը իրեն կամքին հակառակ է, և իրեն չախորժած բաներն ալ՝ վերոյիշեալ նամակներուն մէջն է, որոնց օրինակը սքն Պօղիկարպոս խրկեց փիլիպպեցիներուն, նոր Իգնատիոսի գիրերը առնք

են ըսելով. իրեն ուրիշ բան չի մնար ընելու. բայց եթէ ըսել՝ որ նոր Պողիկարպոսի անունով առ փիլիպպեցիս գրուած նամակը այն սուրբ եպիսկոպոսինը չէ. և բուն իսկ պատմութիւնը սուտ է. ոչ փիլիպպեցիք սուրբ Պողիկարպոսէն սուրբ Իգնատիոսին նամակները ուղած ունին, և ոչ ասիկայ անոնց անանկ բան խրրկած ունի։ Բ սել է որ՝ թէ որ սուրբն Պողիկարպոս այն թուղթը փիլիպպեցիներուն գրած ըլլայ նէ՝ յիշուած նամակներն ալ անիկայ գտած և խրրկած կ'ըլլայ. և անանկ մարդ մը՝ որ սրբոյն Իգնատիոսի հետ անձամբ թղթակցութիւն ունէր, ուրիշ շինծու նամակներ սուրբ Իգնատիոսի անունով չէր խրրկէր. և նամակները սուրբ Իգնատիոսին ըլլալով՝ մէջի գրուած խօսքը չընդունիլը անպատշաճ պիտի ըլլար։ Տայլէ ասոնք ամէնը արմատէն կրտրելու համար՝ առ փիլիպպեցիս թուղթը Պողիկարպոսին չէ ըսաւ. բայց այս չէ ըսելուն՝ ալ՝ սրբոյն Իգնատիոսի խօսքերուն զօրութիւնը խոստովանեցաւ։ Բայց նոյն իսկ նորաղանդներուն մէջէն բազմահմուտ և երեւելի մարդիկ, Բ շրը (Ուսերիոս) և Բիրսըն (Բէարսոն), թէ՛ սուրբ Իգնատիոսի և թէ՛ սրբոյն Պողիկարպոսի նամակներուն հարազատութիւնը անջրելի փաստով կը հաստատեն, և Տայլէին բերած պատճառներն ալ կը հերքեն։

Սրբոյն Իգնատիոսի նամակներուն հաւ-
բաղատութեանը փաստերը և ապացոյցնե-
րը տեսանք վերը։ Սրբոյն Պոլիկարպոսի
նամակին հաւաղատութեանն ալ վկայ ու-
նիմք սուրբն Իրանոս, որ սուրբ Պոլիկար-
պոսէն միայն 36 տարի ետքը նահատակե-
ցաւ։ Ասիկայ կ'ըսէ. «Սուրբ Պոլիկար-
» պոսի մէկ նամակը կայ փիլիպպեցիներուն
» գրած, շատ գեղեցիկ և շատ պատուա-
» կան. որ իրեն հաւատքը՝ և ճշմարտու-
» թիւնը քարոզելու համար բռնած եղա-
» նակը անով կը ճանչցուի» (Ընդդէմ աղան-
դոց. գ. 3)։ Պէտք էր որ Տայլէ այս Ընդ-
դէմ աղանդոց գրքին համար ալ սուրբ Ի-
րանոսինը չէ ըսեր, ասանկ չըսելուն պատ-
ճառը կարծեմ ուրիշ բան չէ, բայց եթէ՝
սուրբ Իրանոսին այս խօսքը չէ տեսած։
Բանզի Արոգինէսի Ուսկասու մեկնութե-
վեցերորդ ճառին մէջ սուրբ Իգնատիոսի
նամակներուն մէջէն վկայութիւն առնը-
ված ըլլալուն համար, թէպէտ Արոգինէս
այն խօսքին հեղինակին անունն ալ չի տար,
Տայլէ ըսած է որ այն վեցերորդ ճառը Ա-
րոգինէսին չէ։

Բայց մէկ մատենագրի մը համար հին
հեղինակներ ժամանակաւ այն մատենա-
գրին մօտ ըլլալով վկայութիւն տան՝ որ
այս ինչ բանը գրեց. և այն բանն ալ հիմա
մեր ձեռքը գըտնըվի նէ, անիկայ անորը
չէ ըսելու համար շատ զօրաւոր պատճառ

կ՚ուզէ. լոկ անորը չէ՛ ըսելով չըլլար։ Չէ՛ նէ՝ Տայլէին բըռնած տրամաբանութեան ճամբովը ամէն մարդ կրնայ ըսել, որ թէ պէտ Մատթէոս աւետարանիչը աւետարան գրեց, և Պօղոս առաքեալը նամակներ գրեց. բայց հիմա մեր ձեռքը անոնց անունովը գըտնըված գիրքերը անոնցը չեն։ Այս ըսածըս մէկ անհիմն հետեւութիւն մը չէ։ Տայլէին կրօնակիցներէն կան որ Մատթէոսի աւետարանին առաջին և երկրորդ գլուխները ուրիշ մը չինած և այն աւետարանին հետը խառնած է ըսեր են։ Աստուածաշունչ գրոց շատին վրայ այդպէս խօսողներ կան նորաղանդներուն մէջ. որուն վրայ ընդարձակ խօսած եմք Բննութիւն կանոնի ասպուածաշունչ գրոց գրքին մէջ. որ Աստուած յաջողէ նէ՝ անոր ալ տպվածը կը կարդաս։ Մենք հայրապետաց վկայութիւնը շարունակեմք։

Զ. ՍՈՒՐԲՆ ՅՈՒՍՏԻՆՈՍ

Ասիկայ ընիկ Պաղեստինու Սամարիա քաղաքէն՝ հեթանոս ծնողաց զաւակ, և ուսմամբ փիլիսոփայ էր. անկեղծ սրտիւ ճշմարտութիւը փնտրելու ելաւ՝ և քրիստոնէութիւն գտաւ, ինչպէս որ ինքը կը պատմէ Տրիփոն անուն հրեային հետ ըրած վիճաբանութեան մէջ։ Քրիստոնէական հաւատքը պաշտպանելու համար երկու

անգամ ջատագովութի գրեց. մէկը մեծ, որ Քրիստոսի 150 թուին Անտոնինոս Պիոս կայսեր տուաւ. երկրորդը փոքր, որ Մարկոս Աւրելիոս կայսեր տուաւ, ինչպէս որ կը կարծըվի՝ 165 կամ 166 թուին. որ ինքն ալ այն տարին նահատակեցաւ։

Ասիկայ առաջին ջատագովութեանը մէջ մկրտութեան և պատարագի արարողութիւնները պատմելէն ետքը կ'ըսէ. "Գոհութեան գործքը հասարակաց աղօթիցը հետ մէկ տեղ ըլլալ լըմընալէն ետքը՝ այն մարդիկը որ մենք սարկաւագ և պաշտօնեայ կ'ըսեմք, գոհացողական աղօթքով Աստուծոյ նուիրված այս հացս և գինիս ժողովրդեան ամէն մէկուն կը բաժնեն. և ետքը հոն ներկայ չի գտնըվողներուն ալ կը տանին։ Այս կերակուրս մեր մէջը կ'ըսվի Եւխարիստիա (գոհութիւն). և ասիկայ միայն անանկներուն տալու հրաման կայ՝ որ մեր վարդապետութեանը ճշմարիտ ըլլալուն կը հաւատան. և Մկրտութեամբ իրենց հեղացը Ողորմութեան առաջ ու վերստին ծնած են. և Յիսուսի Քրիստոսի սորվեցուցած կերպովը կը վարվին։ Բանզի այս հացս հասարակ հացի մը պէս չեմք առներ. և այս գինին հասարակ խըմելիքի պէս չեմք ընդունիր. այլ որովհետեւ գիտեմք որ Յիսուս Քրիստոս մեր փրկիչը՝ որ է Բանն աստուած, մարդ եղաւ, մեր փրկութիւնը

„համար մարմին և արիւն առաւ. ասոր
„պէս ալ կը հաւատամք որ այս ուտելիքը
„և խմելիքը՝ որ մեր մարմնոյն մէջ փոխ-
„վելով մեր մարմինն ու արիւնը կը սնու-
„ցանեն, նոյն իսկ Յանին ասուածոյ սոր-
„վեցուցած խօսքովը սրբագործելով՝ մեր
„սիրոյն համար մարդ եղող Յիսուսի Քրի-
„ստոսի մարմինն ու արիւնն են։ Քանզի
„առաքեալները Աւետարան անունով մե-
„զի ձգած գրուածքովնին մեզի կը սորվե-
„ցընեն՝ որ Յիսուս Քրիստոս ինքը ինչ-
„պէս ըրաւ նէ՝ իրենց ալ անանկ ընել
„պատուիրեց՝ երբ որ հացը ձեռքը առ-
„նելով և գոհանալով ըսաւ. — Այս ա-
„ռաջիք առ իմոյ յիշատակի. այս է մար-
„մին իմ — ։ Նմանապէս բաժակն ալ ձեռ-
„քը առնելով ըսաւ. — այս է արիւն իմ —.
„և այս ընելը միայն անոնց հաղորդեց։
„Մենք այս խորհուրդներուս յիշատակը
„բնաւ չեմք մոռնար, այլ միշտ իրարու
„միտք կը ձըգեմք „։ (Սուրբն Յուստինոս.
Ջատագով. ա. գլ. 66)։

Նրանելը այս խօսքին մէջը անանկ բան
մը կայ՝ որ նորադանդներուն կարծեացը
հաստատութիւն տալ կը ցըցընէ. անոր
համար խօսքը երկանկէկ թարգմանեցինք
որ բան պահած չըլլամք. և այն խօսքին
ալ մեկնութիւնը նոյն իսկ բանին կարգէն
հանելը դիւրին ըլլայ. ամէնը մէկէն կար-
դացողին աչքին առաջը ըլլալով։ Քրիս-

տասի այս խորհուրդս հաստատելը պատ-
մելէն ետքը կ՚ըսէ. «Այս ընելը միայն ա-
» նոնց (առաքելոց) հաղորդեց. մենք այս
» խորհուրդներուս յիշատակը բնաւ չենք
» մոռնար. այլ միշտ իրարու միտք կը ձը-
» գենք»։ Կարելի է որ մէկը ասկէց մակա-
բերելով ըսէ. անանկ է նէ բուն խորհուր-
դը Քրիստոս ինք կատարեց, և առաքեալ-
ներուն ալ հաղորդեց, հոն լըմընցաւ բա-
նը. և մեր ըրածը ուրիշ բան չէ՛, բայց
եթէ այս խորհուրդիս յիշատակը չի մոռ-
նալ, և իրարու միտք ձգել։

Բայց առաջկու ըսած խօսքերը աղէկ
մտադրութեամբ կարդացվի նէ՝ այս խօս-
վածքիս ալ շիտակ միտքը կը հասկըցվի։ Ը-
բանելին այս ջատագովութեան գիրքս անոր
համար գրեց որ հեթանոսները կարդան,
քրիստոնէական կրօնից խորհուրդներուն
տեղեկութիւն ունենան. և քրիստոնէից
վրայօք ունեցած ծուռ կարծիքներնին շիտ-
կեն։ Ուստի քրիստոնէութէ խորհուրդ-
ները բացատրած ժամանակը այնպէս վար-
պետութեամբ մը բացատրութեան խօս-
քերը կը շինէ՝ որ կարդացողները այն բա-
նին մէջ անտեղութիւն մը չի գտնեն, և
հաւանին։ Հաղորդութեան խորհուրդը
ինչ ըլլալը պիտի հասկըցընէր. քանզի ան-
դամ մը խօսքը բանալէն ետքը ծածկել չէր
ըլլար։ Բացէն և մէկէն՝ ի մէկ խօսէր ալ
նէ՝ իրենց ամենեւին չի լըսածը ըլլալով՝

բոլորովին մըսքի դէմ կուգար. ուստի առնոնց հասկըցընելու մասնաւոր կերպ մը կը բըռնէ։ Ակիզբէն հայ և գինի անուանով կը բացատրէ. բայց ասիկայ բաշխելու համար եղած յատուկ հրամանն ալ կը յիշէ, որ քրիստոնէից վարդապետութեանը ճըշմարիտ ըլլալուն հաւատացողներուն և մըկըրտութեամբ իրենց մեղքին թողութիւն առնելով վերստին ծնածներուն միայն տալու հրաման կայ։ Ասով հասարակ հացի և գինիի կարգէ դուրս կը հանէ. և որպէս թէ կարդացողները կը գրգռէ, մըտքերնին կ'արթընցընէ, որ իրեն հարցընեն թէ այդ հացը և գինին ի՞նչ է. որովհետև սովորական հացը ուտելու և սովորական գինին խըմելու համար այդքան ըզգուշութիւն ընել պէտք չէ։ Ասոր համար այն ալ կ'ըսէ որ ասոնք հասարակ ուտելիքի և խմելիքի պէս չեմք ընդունիր։

Այս ըսելէն ետքն ալ մէկէն 'ի մէկ չըսեր թէ՝ Քրիստոսի մարմին և արիւն է, ինչպէս որ մէկ ուրիշ մը կըրնար ըսել. և սուտ ալ չէր. այլ որպէս թէ կամաց կամաց լսողներուն միտքը իր ըսած խօսքերէն ըսելու խօսքին մօտեցընել ուզելով՝ առաջ Յիսուսի Քրիստոսի մարդանալը կը յիշեցընէ. և պարզապէս "մարդ եղաւ" ըսելէն ետքը՝ աւելի մօտ բերելով՝ "մարմին և արիւն առաւ" կ'ըսէ. և ասոր ալ պատճառը բացատրելով՝ թէ այն մարմինն

ու արիւնը «մեր փրկութեանը համար» առաւ. բանը հոն կը ձգէ. և ուրիշ յարմարութեան մը ձեռք կը զարնէ։

Եւ որովհետեւ պիտի ըսէր՝ որ այն հացը ու գինին Քրիստոսի մարմինը և արիւնն էր. և լսողները պիտի տարակուսէին թէ գինին և հացը ինչպէս մարմին և արիւն կրնան ըլլալ, ասոր անհնար բան մը չըլլալը բնականով կը հասկցընէ. «Այս »ուտելիքը և խմելիքը՝ որ մեր մարմնոյն »մէջ թորվելով մեր մարմինն ու արիւնը կը »սնուցանեն». և ասոնցմով լսողներուն միտքը պատրաստելէն ետքը՝ խորհուրդը իր էութեամբը ինչ ըլլալը կը բանայ. բայց մէկ ուրիշ պարագայ մըն ալ եվեցընելով. »մեր սիրոյն համար մարդ եղող Յիսուսի »Քրիստոսի մարմինն ու արիւնն են» կ'ըսէ. ասով կը հասկցընէ թէ Քրիստոս ինչո՞ւ համար իրեն մարմինն ու արիւնը մեզի ուտելու և խմելու տուաւ։ Քանզի այն՝ որ մեր սիրոյն համար մարդ եղաւ, մարդկային բնութիւնը առաւ, և անոր հետ միացաւ, ամէն մէկ մարդու հետ ալ առանձին միանալով ամէն մէկ մարդու վրայ ունեցած սէրը զատ զատ ցրցընելու համար այս խորհուրդս հաստատեց։ Քանզի թէ որ այս խորհուրդս չի հաստատէր նէ՝ մարդանալովը ընդհանուր մարդկային բնութեան հետ միացած կը մնար. ամէն մէկ մասնաւոր և առանձին մարդոց հետ չէր

միանալ. ուստի այս խորհուրդս մարդեղութեան խորհրդոյն լրումն է. և Քրիստոս մարդիկ ազատելու համար մարդկային բնութեան հետ միանալովը ցրցուց որ առանց ասոր փրկութեան հասնելիք չի կար. և թէ որ միայն ասով փրկութիւն ըլլար նէ՝ առած մարդկային բնութեանը հաղորդ գտնըվողները ամէնն ալ փրկըվելու էին. հրէայ, քրիստոնեայ, հեթանոս, բարեգործ, չարագործ. ինչ որ ըլլային. որովհետեւ Քրիստոսի հետ միացած և անմահ փառաց ժառանգ եղած մարդկային բնութեանը հաղորդ են։ Բայց ասիկայ բաւական չէ. որովհետեւ քրիստոնէից մէջ երեւան ելած այսքան աղանդաւորաց մէջէն բնաւ այս խօսքըս ըսող չկայ, թէ բոլոր մարդիկ ինչ հաւատք և ունենան, և ինչ բարքի տէր և ըլլան, փրկութեան պիտի հասնին. թէ և մեռած ատենին նոյն անհաւատութեան և չարագործութեան մէջ մնացած ըլլան։ Անանկ է նէ՝ այն փրկութեանը ժառանգութիւն իրաւունք ունենալու՝ և յաւիտենական կենացը հաղորդ ըլլալու համար պէտք է որ Քրիստոս մեր հետն ալ միանայ. և այս է Քրիստոսի ըսածը. «Թէ ոք ուտիցէ զ-
» հացէ յայսմանէ՝ կեցցէ յաւիտեան։ Եւ
» հացն զոր ես տայ՝ Մարմին իմ է՝ զոր ես տայ
» վասն կենաց աշխարհի» (Յովհ. զ. 52)։ Աշխարհի կենացը համար տուած մարմինը ո՛վ որ

հացի կերպարանքով ուտէ նէ՝ միայն անիկայ է որ յաւիտենական կենաց պիտի հասնի. ով որ չուտէ նէ՝ անիկայ այս կեանքս չունի. «Եթէ ոչ կերիջիք զմարմին որդ-
» ւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա՝ ո՛չ
» ունիք կեանս յանձինս» (անդ. 54)։

Սուրբն Յուստինոս ասոնք այսպէս բա-
ցատրելէն ետքը՝ վկայութիւով ալ կը հաս-
տատէ, իրեն առեղի քահանայից օրհնած
և Աստուծոյ նուիրած հացին և գինիին հա-
մար ըսելով՝ որ «նոյն իսկ Տանին աստուծոյ
» սրբուեցուցած խօսքովը սրբագործելով՝
» մեր փրկոյն համար մարդ եղող Յիսուսի
» Քրիստոսի մարմինն ու արիւնն են». այս
խօսքը, և այս խօսքովս սրբագործելով այն
հացն ու գինին Քրիստոսի մարմին և ա-
րիւն փոխելու իշխանութիւնը անոնց որ-
կէ՛ անցնիլը կը պատմէ. և աւետարանը վը-
կայութիւն կանչելով կ'ըսէ որ՝ «Յիսուս
» Քրիստոս ինքը ինչպէս ըրաւ նէ՝ առա-
» քեալներուն ալ անանկ ընել պատուիրեց
» . . Եւ այս ընելը միայն անոնց հաղորդեց»։
Թէ որ սուրբն Յուստինոս այս խօսքովս
անանկ ըսել ուզեց՝ որ Քրիստոս այս հրա-
մանը և ասիկայ ընելու կարողութիւը միայն
առաքեալներուն տուաւ, անոնց անձինը
սեպհականելով, որ անոնցմէ ուրիշին չէր
կրնար անցնիլ. այս խօսքովս բան մը ըսած
չըլլար. որովհետեւ առաջկու ըսածները
հաստատելուն տեղը կը ջրէ, և այս անյար-

մար միտքը կ'ելլէ։ Յուստինոսի առենը գտնըված քահանայները՝ հացն ու գինին Բանին աստուծոյ սրբվեցուցած խօսքովը կը սրբագործեն. և այն հացն ու գինին Քրիստոսի մարմին և արիւն կ'ըլլայ. ինչո՞ւ համար. անոր համար որ՝ Քրիստոս իր առաքեալներուն պատուիրեց որ ինքը ինչպէս ըրաւ նէ անանկ ընեն. և այս ընելս միայն անոնց հաղորդեց. անանկ որ՝ անոնցմէ զատ մարդ չի կրնար ընել. և անոնք մեռնելէն ետքը ասիկայ ընող չի մնար։

Այսոր պարզ հետեւութիւն մը նախ՝ այն կ'ելլէ որ, անանկ է նէ՝ "Այն ուտելիքը և խըմելիքը... որ սարկաւագն ու պաշտօնեայն ժողովրդեան ամէն մէկուն կը բաժնեն... նոյն իսկ Բանին աստուծոյ սրվեցուցած խօսքովը սրբագործելով՝ մեր սիրոյն համար մարդ եղող Յիսուսի Քրիստոսի մարմինն ու արիւնն են" պիտի չի կրնամք ըսել։ Եւ ասիկայ՝ որքոյն Յուստինոսի ըսածին բոլորովին հակառակն է. և մէկ խօսքով սկիզբէն մինչեւ այս տեղս ըսած խօսքերը ամէնն ալ ջրած կ'ըլլայ. այն ալ ճիշդ այն տեղը՝ որ ըսածները հաստատելու համար աւետարանէն վկայութիւն բերելով գոհութիւն խորհրդոյն հաստատվելոյն պատմութիւնը կ'ընէր։

Երկրորդ պարզ հետեւութիւն մըն ալ այս կ'ելլէ սուրբ Յուստինոսի ըսած խօսքին միտքը ծուռ հասկընալէն. որ առաջ

քեալները Քրիստոսի պատուիրածին պէս ըրած առեն՝ Քրիստոսի յիշատակը չէին ըներ. առաքեալներէն ետքը եկողներուն յատուկ եղաւ Քրիստոսի յիշատակ ընելը։ Քանզի կ'ըսէ. Քրիստոս ինքը ինչպէս ըրաւ՝ առաքեալներուն ալ անանկ պատուիրեց որ ընեն. և այս ընելը միայն անոնց հաղորդեց. մենք այս խորհուրդներուս յիշատակը բնաւ չենք մոռնար. այլ միշտ իրարու միտք կը ձգենք։ Թէ որ սրբոյն միտքը անանկ էր՝ որ առաքեալներուն ըրածը Քրիստոսի մարմին և արիւն էր, յիշատակ չէր. և անոնցմէ ետքը եկող քահանայից ըրածը Քրիստոսի մարմին և արիւն չէ, այլ լոկ յիշատակ է. սրբոյն Յուստինոսի ըսածը աւետարանին խօսքին դէմ կ'ելլար. մանաւանդ այն խօսքին դէմ՝ որ ինքը իրեն առաջկուց ըսածները հաստատելու համար մէջ կը բերէ։

Ուստի հարկ կ'ելլայ՝ սուրբ Յուստինոսը չէ թէ աւետարանին հետ, այլ բուն իսկ իրեն հետ համաձայնեցընելու համար ըսել որ՝ "այս ընելը միայն անոնց հաղորդեց" խօսքին մէջ միայն բառը անոնց անձինը չի վերաբերիր, անոնց պաշտօնին կը վերաբերի. այսինքն՝ այն ամէն մարդոց՝ որ առաքելոց պաշտօնին յաջորդ գտնուեցան։ Այսով սրբոյն Յուստինոսի օրը գլխնելվոյ քահանայներն ալ, հիմակվաններն ալ, և մինչեւ աշխարհքիս վերջը ուրքան

քահանայ եղեր են, կան, և պիտի ըլլան
նէ, Բրիստոս "այս ընելը միայն անոնց հա-
"ղորդեց". անոր համար սրբոյն Յուստի-
նոսի ժամանակն ալ քահանայն "Բանին
"աստուծոյ սորվեցուցած խօսքովը (հացն
"ու գինին) սրբագործելով"... Բոլի մար-
"մինն ու արիւնն են". ասանկ են հիմայ
ալ, և մինչեւ աշխարհքիս վերջն ալ։ Բա-
հանայ չեղողները այս ընելու իշխանու-
թեանը հաղորդ չեն. անոնք այս բանս չեն
կրնար ընել։ Այս ինչպէս որ առաքեալնե-
րը այս խորհուրդս պիտի կատարէին Բը-
րիստոսի ըրածին պէս, կամ մանաւանդ՝
Բրիստոսի ըրածը պիտի ընէին. "Այս
"արարէք". Նոյնպէս Բոլի յիշատակն ալ
պիտի ընէին. պատմելով թէ այս մարմի-
նը ինչ մարմին է. և այս արիւնը ինչ ա-
րիւն է. ինչպէս որ Բրիստոս ինքն ալ ը-
րաւ. հացը ձեռքն առնելով ըսաւ. "Այս
"է մարմին իմ որ վասն բազմաց տուեալ".
և բաժակն ալ առնելով ըսաւ, "Այս բա-
"ժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն
"ձեր հեղելոյ"։ (Ղ-ի. իբ. 19. 20)։
Պօղոս առաքեալը աւելի աղէկ կը բանայ
տեսնն մերոյ "Այս արասջիք առ իմոյ
"յիշատակի" ըսելուն միտքը։ "Բանիցս
"անգամ կ'ըսէ, թէ ուտիցէք զհացս զայս և
"զբաժակս ըմպիցէք, զմահ տեսնն պատ-
"մեցէք" (Ա. Կորն. ժա. 26)։ Այս պատ-
ուիրանիս գործադրութիւնն է որ սուրբն

Յուստինոս կը պատմէ, ըսելով. մենք այս խորհուրդներուս յիշատակը բնաւ չենք մոռնար. այլ միշտ իրարու միտք կը ձգենք։

Երբոյն Յուստինոսի ժամանակը առ հասարակ քրիստոնեայք անանկ կը հաւատային՝ որ հացն և գինին՝ քահանային երբ բաղադրծելովը՝ Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն կ'ըլլան. ուստի իրենք ալ Քրիստոսի մարմինն ու արիւնը կը ճաշակեն։ Այս հաւատքս և դաւանութիւնս հեթանոսներէն կը պահէին, չի հասկըցած բաներնուն վրայ գայթակղութեան առիթ մը չի տալու համար. բայց հեթանոսներուն ականջը մէկ չփոթ լուր մը հասած էր. կարելի է թէ քրիստոնէութենէ ուրացողներուն պատմելովը, թէ ալիւրէ շինված հացին տեսակին տակը՝ մարդոյս փրկուելը համար մարդ եղած և սուրբ Կուսէն ծնած Յիսուսի Քրիստոսի մարմինն է կերածնին։ Սկէց մէկ անճոռնի առասպել մըն ալ շինեցին հեթանոսները. որով քրիստոնեայները կը զրպարտէին ըսելով, թէ գիշերվընները գաղտնի կը ժողվըվին. մէկ տղայ մը կը մորթեն, անոր միսը ալիւրը կը թաթխեն, անանկ՝ որ միս ըլլալը չերեւիր. և ադնիկայ իրենց մէջը կը բաժնեն. և ամէնն ալ ասկէց կուտեն։ Հեթանոսաց այս զրպարտութիւնը կը պատմէ սուրբն Յուստինոս, նոյն ջատագովութեան 26 գլուխը։ Սուրբ Յուստինոսէն առաջ այս զրպար-

տուԹիւնս կար հեԹանոսաց մէջ. և Պլինիոս կրտսեր ըսվածը՝ որ մէկ կռապաշտ փիլիսոփայ մըն էր, և Տրայիանոս կայսեր հրամանաւը Պոնտոս և ԲիւԹանիա գաւառներու փոխանակ բդեշխի եղաւ, Քրիստոսի 104 Թուին առեններըը քրիստոնեայները պատժելու կերպին վրայ մէկ առանձին նամակով մը Տրայիանոս կայսեր հարցընելով կ'ըսէ, որ քրիստոնեայներուն շատը Քրիստոս ուրացան. բայց իրենց կը բծնքին համար այն ալ խօսեցան՝ որ ուրիշ յանցանք չունին եղեր, բայց եԹէ որոշված օրերը արեւը ծագելէն առաջ կը ժողվվին. և Քրիստոսը Աստուած սեպելով անոր օրհնուԹեան երգ կը կարդան, և իրարու հետ մէկ տեղ ուխտ կ'ընեն՝ չէ՛ Թէ գէշուԹիւն ընելու համար, այլ չգողնալու, շնուԹիւն չընելու, մարդու նենգուԹիւն չընելու, իրենց տրված աւանդը տէրը ուզած առենը ետ տալու և չուրանալու. և անկէց ետքը իրարմէ զատվելով՝ նորէն կը ժողվվին և կերակուրնին կ'ուտեն. և կերակուրնին ալ սովորական կերակուր է. ոչ սովորականէ դուրս բան կայ, և ոչ անանկ բան մը կ'ընեն՝ որ իրենց մեղք և յանցանք սեպվի։ Պլինիոսի քրիստոնէից համար այս խօսքերս գրելը կը ցըցընէ որ առոնց հակառակը ըսող կար. այսինքն՝ քրիստոնէից Թշնամիները անանկ համբաւ հանած էին որ՝ քրիստոնեայները

իրենց ժողվված ատենը ուխտ կ'ընէին իրարու հետ՝ որ գողութի ընեն, շնութի ընեն, մարդ խաբեն, իրենց տրված աւանդը քովերնին պահեն և տիրոջը չի տան։ Այնպէս համբաւ ելած էր՝ որ կերակուրնին սովորականէ դուրս բան մըն է. անանկ բան մը՝ որ իրենց մեղք և յանցանք կը սեպվի։ Այս թէպէտ Պլինիոս ասոր սուտ ըլլալը ստուգեր էր, բայց զրպարտիչներուն բերանը չէր գոցված. և վերջապէս բանը այն աստիճանին հասած էր՝ որ ասիկայ իբրեւ ամենաստոյգ բան մը բռնեցին. ինչպէս որ ամէն ատեն զրպարտողաց սովորութիւնն է. ըսած սուտերնին այնքան շատ անգամ և այնքան շատ տեղ կը զրուցեն, որ վերջը լսողները շատ տեղէ նոյնը լսելով քըչիկ քըչիկ հաւատալ կը սկսին։ Այս երբ որ քրիստոնէի մը կը հարցընէին թէ մանր տղայ ինչո՞ւ կը մորթէք կը կլտրտէք, և միսը ալիւրի մէջ թաթխելով հում հում կ'ուտէք, և անիկայ մենք այդպէս բան չեմք ըներ, և ըսած ալ չունիմք ըսեր նէ՝ դուն ճշմարտութիւնը մեզնէ կը ծածկես ըսելով չարաչար կը տանջէին։ Այսոր վրայ Այուսեբի կեսարացին եկեղեցական պատմութեան մէջ՝ (Գ. Ե. 1). Լիոն քաղաքը նահատակվողներուն պատմութիւը գրելով, որ Քրիստի 177 թուին ատենները նահատակվեցան, և անոնց պատմութիւնն ալ այն ժամանակը գրվեցաւ Լիոն

ան և Վ՝ իմն քաղաքները գտնելոց քրիստոնեայներին, կ՚ըսէ. քաղաքին կառավարիչը քրիստոնեայները բռնաբռելու և գտնելու շատ մեծ հոգ տարաւ. քրիստոնեայները բռնած առեն՝ անոնց գերիները և ծառայները և սպասաւորները հետ կը բռնէին, որ կռապաշտ էին։ Բայց ասոնք վախնալով որ սուրբերուն քաշած չարչարանքը իրենք ալ չի քաշեն, ինչ որ իրենց ըսել կուտային՝ նէ իրենք ալ կ՚ըսէին. և զրպարտութիւններ կ՚ընէին որ քրիստոնեայները տղու միս կ՚ուտեն, և զարհուրելի յանցանքներ կ՚ընեն. և այլն։ Մինուկիոս Փելիքս անուն քրիստոնեայ իմաստասէրին Հոկտաւիոս ըսված գրքին մէջն ալ կը գտնեմք, որ Կեկիլիոս անուն հեթանոս բարեկամին այս զրպարտութեանս հաւատացեր է։ Ուրիշ վկայներ ալ կան՝ հեթանոսներուն ասանկ զրպարտութիւն ընելնին վկայող։

Հիմա թէ որ անաչառ քննելու ըլլամք նէ՝ այս զրպարտութեանս բուն պատճառը կը գտնեմք որ հաղորդութեան վրայօք՝ Բրիստոսի եկեղեցւոյն այն ատենը ունեցած հաւատքէն առնլված է։ Մէկ մը՝ որ եկեղեցիին արձակվելէն ետքը նորէն կը ժողվվին հոն՝ և կերակուրնին կ՚ուտեն եղեր՝ կ՚ըսէ Պլինիոս. և այն ատենվան կերակուրնին սովորականէ դուրս բան մըն է եղեր. և մեղք և յանցանք սեպվե-

լու բան մը չի պարունակեր եղեր։ Անանկ է նէ՝ հեթանոսներուն ըրած զրպարտութիւնը այն ատենվան կերպակուրին համար է եղեր։ Եւ ասիկայ յայտնապէս պատարագն է, որ առաւօտեան ժամերգութիւնը լսմընելէ և եկեղեցին արձակելէն ետքը նորէն կը ժողվըվէին և այն ատենը կ'ընէին. այսինքն՝ ցերեկվան հաց ուտելու ատենը. ասոր համար ժամերգութեան այն մասը՝ որ պատարագն ալ իր մէջը կը պարունակէ, մինչեւ հիմա կ'ըսվի ճաշու- ժամ. և պատարագի ատեն կարդացված շարականը և գլուքը և աւետարանը՝ ճաշու- շարական և գլուք և աւետարան։ Եւ ճաշ՝ ցերեկվան հաց ըսելէ։ Այն ատենն էր՝ որ պատարագի խորհուրդը լսմընելէն ետքը եկեղեցւոյ մէջ կը նստէին հացերնին կ'ուտէին քրիստոնեայները. ինչպէս որ սուրբն Պօղոս առաքեալն ալ կ'ըսէ. (Ա. Կորն. ԺԱ. 20. 21. 22. 33. 34)[1]։ Այս սովորութեան

1 Պօղոս առաքեալը այս սովորութեանս մէջ եղած անկարգութիւնը կշտամբելուն կարգը՝ Քրիստոսի վերջին ընթրեաց խորհուրդն ալ մեկնելով, նորադանդներէն ոմանք ասկէց պատճառ կ'առնեն ըսելու՝ որ այս հաց ուտելս ու հաղորդութիւն ըսածը մի և նոյն բանն է. և ասկէց կը հետեւցընեն որ՝ ուրեմն հաղորդութիւնը Քրիստոսի մարմին և արիւն չէ։ Սակայն ատիկայ ըսողներուն պէտք էր այս ալ մոռնալ՝ որ Քրիստոս տէրն մեր երբ որ հացը ձեռքը առաւ, և այս է մարմին իմ ըսելով իրեն մարմին ըրաւ. գինին առաւ՝ և այս է արիւն իմ ըսելով իրեն արիւն ըրաւ նէ, նոյն սեղանին վրայ ուրիշ հաց և ուրիշ գինի և ուրիշ կերպակուր ալ կային. և մարդ չըսեր

մէջ առաքեալներուն օրէն անտեղութիւններ մտած ըլլալուն համար՝ որ Եռքը 'ի հարկէ

որ անանք ալ փոխվեցան՝ Քրիստոսի մարմին կամ արիւն եղան։ Սակայն մի և նոյն ատեն՝ մի և նոյն սեղանի վրայ կ'ըլլան ամէնն ալ. հասարակ հաց, և հացէ փոխարկըված Քրիստոսի մարմին. հասարակ գինի՝ և գինիէ փոխարկըված Քրիստոսի արիւն. և ասանք ամէնը մէկ սեղանի վրայ ըլլալով՝ թէպէտ ամէնը մէկ չեն, բայց Քնի մարմնոյն և արեանը ներկայութիւնը սեղանը սրբըվելով՝ վրայիններն ալ սուրբ կ'ըլլան. և անոնց ալ մասնաւոր յարգութի պէտք է։ Սուրբ առաքեալը հաւատացեալները պարկեշտութեան և բարեկարգութի յորդորելու համար՝ սեղանն ու սեղանին վրայինները ամէնը մէկէն սրբող Պատարագին զօրութիւնը կը հասկրցընէ. որ անկէց ակնածութիւն ընեն. և թէ որ անարժան են նէ՝ անկէց չուտեն որ դատաստանի պարտական չի մնան Քրիստոսի մարմինը հասարակ հացէն չի խըտրելով։ Եւ թէ որ անկէց պիտի չուտեն նէ՝ միւս հացը որ հասարակ բան մըն է, ո՞ւր ուզեն նէ կրնան ուտել։ Թէ որ այն սեղանին վրայ գտնըված հացերը ամէնը մէկ ըլլային և տարբերութիւն չունենային նէ՝ ինչո՞ւ մի և նոյն հացին համար մէկ մը կ'ապրսպրբէ որ մարդ ինքըզինքը փորձէ ու անանկ ուտէ. որ թէ որ անարժանութիւն ուտէ նէ՝ ահագին պարտաւորութեան տակ կը մնայ. և Եռքը կ'ըսէ՝ որ անօթեցողը տունը թող հաց ուտէ. կամ թէ որ հոն պիտի ուտէ նէ՝ իրարու սպասվի. "Այսու„ հետեւ եղբարք, յորժամ'ի մի վայր ժողովիցիք ուտել՝ „միմեանց մնասջիք. ապա թէ ոք քաղցեալ իցէ՝ 'ի տան „կերիցէ"։ Նայէ՝ չըսեր թէ՝ ապա թէ ոք անարժան իցէ՝ 'ի տան կերիցէ. անանկ է նէ՝ հացերուն մէջ տարբերութի կայ։ Եւ Քրիստոսի ձեռքը առնելով այս է մարմին իմ ըսած հացը հաց մնաց՝ և մէկալ հացերուն հետ նոյնն է ըսողն հարկ կ'ըլլայ ըսել՝ որ անարժան ըսելը թաղչելու ըսել է. և մի և նոյն հացը անարժանութեամբ ուտելով՝ երբեմն դատապարտութեան արժանի կ'ըլլայ. այսինքն՝ երբ որ եկեղեցւոյ մէջ ուտէ նէ. և երբեմն այն բանը՝ որով Քրիստոսի մարմինը կ'անարգըվի, անվնաս բան մը կ'ըլլայ. այսինքն՝ երբ որ տան մէջ ուտվի նէ։ Առաքելոյն խօսքը ծուռ հասկրցողը թո՛ղ մտածէ որ այս բաներս ալ կրնա՞յ մի ըսել տալ առաքելոյն։

եվելցած պիտի ըլլայ, վերջացուցին. ա-
ռաքելոյն «Եթէ ոք քաղցեալ իցէ՝ 'ի տան
կերիցէ» ըսած վճռոյն զօրութիւն.
բայց հին սովորութեան յիշատակը մնաց՝
պատարագէն ետքը մաս բաժնելը. որ Յու-
նաց և ուրիշ եկեղեցիներ ալ ունին մեզի
պէս։ Երկրորդ՝ կերածնին պզտիկ և նորա-
ծին տղու մարմին է եղեր. և երրորդ՝ վը-
րան ալիւրով կը գոցեն անանկ կը բաժնեն
եղեր։ Ցիմար, Թանձրամիտ և զրպարտիչ
հեթանոսները ասանկ մրոքի մը կրցան
յարմարցընել հաւատացելոց դաւանութիւնը.
որ կ'ըսէին՝ թէ ճաշակածնիս տեառն մե-
ծոյ Յիսուսի Քրիստոսի կուսածին մար-
մինն է, որ հացի տեսակի տակ պահված է։
Եւ թէ որ այն առեղնման քրիստոնեայները
այս հաւատքս չունենային նէ՝ այս զրպար-
տութիւնը հեթանոսներուն միտքը որկէ՞
կրնար գալ։ Ասենք թէ մարդու միս ու-
տելը մտովնին գար, որ անանկ ընող աղ-
գեր կան, բայց այն միսը ալիւրով ծած-
կելուն գաղափարը ո՞ր տեղէն մտքերնին է-
կաւ։ Ասոնց այս զրպարտութիւնս էր ահա,
որ սրբն Յուստինոս հերքել ուզելով հա-
ղորդութեան խորհուրդը և պատարագի
արարողութիւնը ընդարձակ բացատրել պէտք
եղաւ իրեն։ Ահա այսպէս կուապաշտներն
ալ քրիստոնէից համար ըրած այս անտեղի
զրպարտութիւնովնին՝ այն առեղնման քրիստո-
նէից հաղորդութեան խորհրդոյն վրայօք
ունեցած հաւատոցը վկայութիւն կուտան։

ԳԼԽ Գ.

3. ՍՈՒՐԲՆ ԵՐԱՆՈՍ

Այս սուրբ հայրապետս՝ որ հետևողաբաբելոց անունով ճանչցված է մեր մէջ, Քրիստոսի 178 թուին Յովանասայի Լիոն քաղաքի եպիսկոպոս եղաւ սուրբ Փոտինոսին տեղը. և 202 թուին նահատակեցաւ։ Այսոր խօսքերը հոս դնելէն ետքը՝ պէտք եղած խորհրդածութիւններն ալ կ'ընեմք. որով սուրբ հայրապետին խօսքերը որ ինքնին բաց են և դիւրաւ կ'իմացվին, և աւելի կը բացվին։

"Յիսուս Քրիստոս անանկ բան մը „ձեռք առնելով՝ որ իր բնութեամբը հաց „էր, օրհնեց, գոհացաւ և ըսաւ. այս է „մարմին իմ։ Անմանապէս բաժակն ալ՝ որ „արարածներէն է, իրեն արիւնը ըլլալը „հաստատեցուց. և իր կտակին նոր պատա„րագը սորվեցուց. և եկեղեցին այս (իշ„խանութիւնը պատարագելու) առաքեալ„ներէն առաւ. և բոլոր տիեզերքը այս պա„տարագս կը մատչի Աստուծոյ՝ որ մեզի „անունդ կուտայ"։ (Ընդդէմ աղանդոց. գիր. դ. 17. Ռիթ. 5)։

Սուրբ հայրապետին ըսած խօսքերէն, բան մը որ բնութեամբ հաց էր, բաժակը՝ որ արարածներէն էր, յայտնի կ'երևի որ ասիկայ իբրեւ ուրիշ խօսքի և սկզբունքի մը ա-

պայծայ է. նպատակը այն չէ՛ որ հաղորդութեան խորհրդոյն մէջ Քրիստոսի ճըշմարիտ մարմնոյ և արեանը ներկայ ըլլալուն վրայօք հակառակորդին մոլորութիւնը հերքէ կամ շիտակէ. այլ անանկ կ'ենթադրէ՝ որ այս բանիս վրայ հերետիկոսներն ալ ուղղափառներուն պէս կը հաւատային. ուստի ասով անոնց չի հաւատացած մէկ բանը ընդունել պիտի տայ. կամ թէ որ չընդունին նէ՝ իրենց ընդունածին հետ անոնք հակասութեան մէջ ձգէ։ Ուստի առաջ պէտք է հասկըցընել՝ թէ Վաղենտինեան հերետիկոսներուն աղանդը ի՞նչ էր, որուն դէմ կը գրէր սուրբ Հայրապետը, և հաղորդութեան վրայօք եկեղեցւոյ ունեցած հաւատքը՝ որ իրենք ալ կ'ընդունէին, ի՞նչպէս անոնց աղանդը կը ջրէր, և իրենք հակասութեան մէջ կը ձըգէր։

Վաղենտինեանները կ'երեւի որ կռապաշտներուն բազմաստուածութեան և դիցաբանութեան պէս բան մը ալ քրիստոնէական կրօնքին սորվեցուցած հաւատքին մէջ խօթել ուզեցին. անոնց ըսածներուն պէս աստուած ալ իրարմէ ծնած և ծագած և իրարու հակառակ աստուածներ մտածեցին. որով քրիստոնէութիւնը աստուած մը կռապաշտութեան պէս եղաւ։ Կ'ըսէին՝ որ գերագոյն աստուած մը կայ. բայց աշխարհքս ստեղծողը այն չէ։ Բանզի Վաղենտինոս կը քարոզէր՝ որ աստուած

մէկ անճառելի լիութիւն և բովանդակութիւն Իլերոմա մին է. որուն մէջ երեսուն հատ իմացական ոգի կը պարունակի. և այս ոգիներուս Իոնա կ'ըսէր, որ յաւիտեան ըսել է։ Այս Իոնաներուս ամէն մէկուն զատ զատ անիմանալի անուններ կուտար. և երեք կարգ կը բաժնէր. առաջին կարգին տալով 8 Իոնա. երկրորդին 10, և երրորդին 12։ Ամէն Իոնաներուն գլուխ կը ճանչնար յաւիտենական և անհասանելի աստուածը, որուն անուն կուտար Իրօօ՛ն, նախագոյ. Իրօքաղօր, նախահայր. բայց իբրեւ յատուկ անուն կը սեպէր Վիրո՛ն, որ անդունդք և խորութի ըսել է։ Կ'ըսէր որ՝ այս Իոնաներուս մէկը՝ Ամոմ անուն ուրիշ Իոնա մին ալ իրեն կցորդ ունէր, որ Տիմիուրգոս կ'ըսվէր. այսինքն՝ աշխարհաստեղծ. և ասիկայ՝ Ամոմթին միածին որդին կը սեպվէր։ Ամոմթ ասիկայ իրեն իբրեւ գործիք ընելով՝ առջի բերանը ստեղծուած խառնիխուռն բաները կարգի դնելը ասոր յանձնեց. և այս ալ բոլոր էակները կամ ստեղծուածները երկու կարգ բաժնելով՝ մարմնաւոր և հոգեւոր, սանկով ստեղծեց ամէն երեւելի և անեւեւոյթ արարածները. և ասոնց կարգը եօթն երկինքն ալ ստեղծեց։ Վաղենտինոս աշխարհքիս մէջի անկարգութիւնները և անկատարութիւնները անոր կուտար՝ որ գերագոյն աստուծոյ ստեղծածը չեն։ Անոր

համար կ'ըսէր որ Յիսուսի Քրիստոսի առած մարմինը մեր մարմինին գոյութենէն չէր. նոր Մարիամ կոյսէն մարմին չառաւ. այլ մերինէն տարբեր մարմին մը ունէր. որուն բնութիւնը ինչ ըլլալը չեմք կրնար գիտնալ։

Մարկիոն աղանդապետը Վաղենտինոսի հնարած դիցաբանութիւնը որպէս թէ մեկնութի՛ւն եվելցընելով ըսաւ՝ որ աշխարհքս ստեղծող Տի՛դ՝-ՐՔ՝-ը բարի աստուած չէ՛ր. մարդոց թշնամի աստուած մըն էր. և Մովսիսական օրէնքը ասիկայ տուաւ կ'ըսէր։ Յիսուս Քրիստոս բարի աստուծոյ կողմէն աշխարհք եկաւ՝ որ Տիմիուրգոսին ըրած ներքը աւրէ, և մարդիկ անոր բռնութենէն ազատէ։ Ուստի՝ Տիմիուրգոսին հետ բընաւ հաղորդակցութիւն մը չունենալու համար՝ Քրիստոս ճշմարիտ մարմին ալ չառաւ կ'ըսէր. որովհետեւ ասոր կարծեօքը՝ թէ որ ճշմարտապէս մարմին առած ըլլար նէ՝ զինքը խաչողին թշնամիին հետը միացած պիտի ըլլար։ Եւ ասոր հետեւութի՛ն մըն էր մարմնոց յարութիւնը ուրանալը, որ Գնոստիկեան աղանդաւորները ամենն ալ կ'ուրանային. չար Տիմիուրգոսին ստեղծած մարմինը՝ բարի աստուծոյ յատկութի՛ն եղած անմահ կենացը հաղորդ չիկրնար ըլլալ կ'ըսէին։ Վաղենտինեանները ու Մարկիոնեանները ալ՝ այս Գնոստիկեաններուն մէկ մէկ ճիւղերն էին։

Սուրբն Իրանոս ասոնց աղանդոյն անհաստատ և դատապարտելի ըլլալը ցցուցած ուրիշ ապացոյցներուն հետ՝ ասոնց աղանդոյն պարունակած հակասութիւններն ալ երեւան կը հանէ. որ այդ կարծիքները հակառակ կուգան ճշմարիտ հաւատոց այն յօդուածներուն՝ որ իրենք ալ իբրեւ ճշմարիտ կ'ընդունէին։ Իւ ամէնէն աւելի այն կը բըռնէ՝ որ հաղորդութեան վրայօք ունեցած հաւատքնին՝ Ռըրիստոսի մարդացած ատենը առած մարմնոյն բնութիւնը վրայ ունեցած հաւատքներուն դէմ է։ Թէ որ կ'ըսէ անմահ յարութիւն առնելը և փառաւորվիլը մարդկային մարմնոյ չըլլար կ'ըսէք, և Ռրիստոս մեզ իր ճշմարիտ արիւնը թափելով չի փրկեց կ'ըսէք նէ՝ ասկէց կը հետեւի՝ որ "Յոհութեան բաժակն ալ անոր արեանը հաղորդութիւն եղած պիտի չըլլայ։ Ռանզի արիւնը ուրիշ բան չէ՛. եթէ ոչ՝ երակներէն և մըսէն և ուրիշ մարդկային մարմնոյ անդամներէն է՝ և անոնց պէս գոյացութի մըն է. որ Ռանն աստուած ճշմարտապէս իրեն առաւ. և իրեն արիւնովը մեզ ծախու առաւ. ինչպէս որ անոր առաքեալը կ'ըսէ.—Որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, և զթողութի մեղաց մարմնովն նորա"։ (Կողոս. Ա. 14։)—(Սուրբն Իրանոս. ընդ դէմ աղանդոց. Է. 2. Ի–. 2)։ Այս հետեւու-

թիւնս՝ Վաղենտինոսի և Մարկիոնի դէմ շատ զօրաւոր է։ Թէ որ՝ ինչպէս որ ասունք ալ կը հաւատային, հաղորդութեան խորհուրդը Քրիստոսի մարմինն ու արիւնն է, և առնողներուն կերածը և խըմածը այս բաներս են, և թէ որ արդ՝ ըսածնիս մարդկային մարմնոյն երակներէն և միսերէն կուգայ, և մարմին ըսվածը թանձր մասունքներըն են, ասկէց հարկաւորապէս կը հետեւի՝ որ հաղորդութեան խորհուրդը ճշմարիտ և իսկական մարմին և արիւն հաւատացողը պիտի ընդունի՝ որ Յիսուս Քրիստոս կատարեալապէս և ճշմարտապէս մարդկային մարմին և բնութիւն առած էր։ Իմա այս խօսքս դարձընեմք։ Թէ որ հաղորդութեան խորհուրդը Քրիստոսի ճշմարիտ մարմին և արիւն ըլլալը, և այն մարմինն ու արիւնը իրօք մեր ճաշակելը անհընար ըլլար նէ, և թէ որ հերետիկոսներուն ըսածին պէս՝ Քրիստոս ճշմարիտ մարմին առած չըլլար՝ և ճշմարիտ արիւն չունեցեր նէ, Երեայներուն համար չէինք կրընար ըսել թէ Քրիստոսի արիւնը թափեցին. որովհետեւ այս կարծեօքս՝ արիւն ունեցած չէր ըլլար որ թափի։ Ու ասկէց ալ կը հասկընաս՝ որ հաղորդութեան խորհրդոյն վրայօք եղած եկեղեցւոյ վարդապետութիւնը Քրիստոսի ճշմարիտ մարդեղութիւնը հաւատքին հետ ոչքան կապված է։

Հաղորդութիւն խորհրդոյն ուղղափառաց պէս հաւատացողին հարկ է որ մարդկային մարմնոյ յարութիւն առնելուն ալ հաւատայ։ Քրիստոսի ըսած խօսքերը ասիկայ յայտնի կը հասկցընեն. (Յովհ. զ 55). և խորհրդոյս սահմանադրութեան խօսքն ու նպատակն ալ ասիկայ յայտնի կը հասկցընեն. «Որովհետեւ՝ կ'ըսէ սուրբ „հայրապետը, անոր անդամքն եմք՝ և ստեղ„ծուած բաներով անուանդ կ'առնեմք, և „Աստուած իր արարածները մեզի կուտայ. „իր ուզածին պէս արեւը մեր վրայ կը ծա„գէ՝ և անձրեւը կը խրրկէ. ուստի բա„ժակով՝ որ ստեղծուած է, իրեն թափած „արիւնը կուտայ՝ որ մեր արեանը խառնը„վի և անիկայ եվեղցընէ. և արարած հա„ցը իրեն մարմին կ'ընէ. և անով մեր „մարմինը կ'աճի» (Ընդ դէմ աղանդոց. Ե. 2. Ի– . 2)։ Անոքը յայտնի է. և սուրբ հայրապետը այս խօսքովս երկու կերպ առարկութիւն կ'ընէ հերետիկոսներուն դէմ։ Մէկ մը՝ Քրիստոսի ճշմարիտ արիւն ունենալուն վրայ, որ Արկիոն կ'ուրանար. գինին իրեն թափած արիւնը կ'ընէ և անանկ կուտայ ըսելով. որով կ'ենթադրէ թէ թափած արիւն ունի։ Բայց որովհետեւ Վաղենտինոս չէր ըսեր վճռաբար՝ որ Քրիստոս ճշմարիտ մարմին և արիւն չունի, այլ ունեցած մարմնոյն և արեանը բնութիւնը ինչ ըլլալը չեմք գիտեր կ'ըսէր, երկրորդ

առարկութիւնը ասոնց դէմ է, թէ Քրիս-
տոսի մարմինը և արիւնը՝ մեր մարմնոյն և
արեանը բնութիւնէն են. և մերինին պէս
արարած են. որովհետեւ գինին իրեն արը-
իւն կ'ընէ և մեզի կուտայ, և անով մեր
արիւնը կ'եւելնայ. հացը իրեն մարմին
կ'ընէ և մեզի կուտայ, և անով մեր մար-
մինը կ'աճի և կը սնանի։ Ընանկ է նէ՝ մեր
մարմինը և արիւնը ինչ բնութիւն ունին
նէ՝ Քրիստոսի մարմինն ու արիւնն ալ նոյն
բնութիւնը պիտի ունենան։

Սուրբ Հայրապետին յաջորդ խօսքն ալ
տեսնենք, որ եկեղեցւոյ դաւանութիւնը
աւելի կը հաստատէ. և վերի խօսքին միտ-
քը աւելի կը բացվի։ "Հիմա խառնեալ
" բաժակը և շինված հացը աստուածային
" բանը առնելով Քրիստոսի մարմնոյ և ա-
" րեան գոհութիւն է-խարիստիա ըլլան. ո-
" րով մեր մարմնոյն գոյութիւնը կ'աճի և
" սնունդ կ'առնէ. այս ասանկ ըլլայ նէ՝
" ինչպէս կ'ուրանան թէ այս մարմինս յա-
" ւիտենական կենաց ընդունակ չէ. որ այս
" կեանքը ոչ պարգեւ է. և մարմիններս ա-
" սոր ընդունակ ըլլալու է հարկաւ. որով-
" հետեւ Քրիստոսի մարմնով և արեամբը
" սնանելով անոր անդամ է։ Ուստի և ա-
" ռաքեալն ալ կ'ըսէ. — Օ՛ի անդամք եմք
" մարմնոյ նորա 'ի մարմնոյ նորա և յոսկե-
" րաց նորա — " (Եփես. Ե. 30)։ Սուրբ Հայ-
բապետը այս վկայութիւնս շատ աղէկ կը

բանեցընէ հաղորդութիւն խորհրդոյն վրայ. քանզի հաւատացեալներուն Քրիստոսի անդամ ըլլալը, և անանկ անդամ՝ որ մարմինը անոր մարմինէն և ոսկորները անգամ անոր ոսկորէն եղած ըլլան, ուրիշ կերպ չի հասկըցվիր, բայց եթէ անոր մարմինը և արիւնը ճաշակելովինս. որով մարմինը մարմիններս կը անուցանէ, և արիւնը արիւններս կ'աճեցընէ։ Քրիստոս մարդկային մարմին առած ըլլալով մեզի հետ բնութիւն կցորդ ըլլալուն վրայ մեկնելը այնքան չի յարմարիր. չէ՛ նէ՝ հեթանոսներուն և կռապաշտներուն համար ալ նոյնը ըսելու կարող պիտի ըլլայինք. քանզի հաւատքին զատ ըլլալովը մարդկային բնութիւնին զատ եղած չըլլար. Քրիստոսի մարմինը ինչ տեսակ մարմին էր նէ՝ ասոնց մարմիններն ալ նոյն տեսակն էր. բայց ոչ սուրբ գրոց և ոչ եկեղեցական կամ արտաքին մատենագրաց մէջ սովորութիւն չկայ՝ որ հեթանոսներուն համար ասանկ խօսք մը ըսեն։ Ուստի նոյն առաքեալը ուրիշ տեղ՝ սրբոցն ու սրբեալը մէկ բնութենէ են ըսելէն ետքը՝ սրբեալները այն սրբութեանը ինչպէս հաղորդ ըլլալնին ալ կը հասկըցընէ. "Զի որ սրբէն „և որ սրբին, 'ի միոջէ էին ամենեքեան. „վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս ա„նուանել զնոսա։ . . Այդ՝ որովհետեւ „մանկունք հաղորդեցին արեան և մարմնոյ, և „ինքն իսկ մերձաւորութեամբ կցորդ ե-

„զեւ նոցունց զի մահուն իւրով խափա-
„նեսցէ զայն՝ որ զիշխանութիւն մահուն
„ունէր. այսինքն է՝ զսատանայ „ (Եբր. բ.
11. 14)։ Այս ալ լոկ բնութեամբ հաղորդ-
դակցութիւն չէ. քանզի անանկ ըլլար նէ՝
միայն մարդկային մարմին և արիւն ունե-
նալով Քրիստոսի հաղորդ եղողներուն ալ
կցորդ պիտի ըլլայ. և լոկ այս կցորդութիւս
բաւական պիտի ըլլայ սատանայն խափա-
նելու. որ լրսված բան չէ։ Այլ այս մարմ-
նոյ և արեան հաղորդութիւնը՝ նոյն ա-
ռաքելոյ ուրիշ տեղ ըսածն է. „Բաժակն
„օրհնութեան զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն
„հաղորդութիւն է արեանն Քրիստոսի, հացն զոր
„բեկանեմք՝ ոչ ապաքէն հաղորդութիւն է
„մարմնոյն Քրիստոսի։ Զի մի հաց՝ մի մարմին
„եմք բազումքս. զի ամենեքեան 'ի միոջէ
„հացէ անտի վայելեմք „ (Ա. Կրն. ժ. 16.
17)։ Քրիստոսի մարմինը և արիւնը ճա-
շակելով քրիստոնեայները՝ Քրիստոսի հա-
ղորդ կ'ըլլան, և իրարու հետ ալ կցորդ
կ'ըլլան. ամէնքս մէկ մարմին եմք. ամէնքս
Քրիստոսի անդամ եմք այն մէկ հացէն
վայելելովնիս. որ երեւոյթքը հաց է, բայց
էապէս մարմին ըլլալով՝ անկէց ուտելը Քրի-
ստոսի մարմնոյն հաղորդ ըլլալ կ'ըլլայ։
Սուրբ հայրապետին բերած վկայութիւնը
յարմար ըլլալուն վրայ այսքան տեղեկութի-
տալով՝ որ մեր խօսքին կարդէն ալ դուրս
չէ, հիմա նոյն երանելւոյն յաջորդ խօսքը
նայիմք։

"Ամիկայ (անդամք եմք մարմնոյ նորա՝
„և այլն, խօսքը, որ վերը ըսաւ), հոգե-
„ւոր և աներեւոյթ մարդուն համար չը-
„սեր. քանզի հոգին ոչ միս կ'ունենայ և ոչ
„ոսկր. այլ այն կազմուելը համար կ'ըսէ՝ որով
„մարդս ճշմարիտ մարդ է. որ միսէ և ջի-
„ղերէ և ոսկորներէ բաղկացեալ է. որ
„սնունդ կ'առնէ այն բաժակէն՝ որ անոր
„արիւնն է. և այն հացովը կ'աճի՝ որ իրեն
„մարմինն է։ Այս գետինը թաղված որթոյ
„(ասմայի) պէս իր ժամանակին պտուղ կը
„բերէ. և ցորենի հատի պէս հողին տա-
„կը փըտուել և քակվելէն ետքը կը բազ-
„մանայ ու անանկ կը բուսնի աստուածային
„հոգւով՝ որ ամէն բան կը պահպանէ. և
„Աստուծոյ իմաստութիւնը մարդկան պի-
„տոյիցը կուգան. և աստուածային բանը
„ընդունելով գոհութիւն խորհուրդ է-խա-
„ռի՞ կ'ըլլան. որ է Քրիստոսի մարմինն ու ա-
„րիւնը։ Այս այսպէս մեր մարմինն ալ անով
„սնանելով՝ և աճելով՝ անով գետինը կը
„թաղվի և կը փըտուի. և ետքը իր ժամա-
„նակին յարութիւն կ'առնէ։ Քանզի աստ-
„ուածային բանը անոնք կը յարուցանէ
„՝ի օր աստուծոյ փառքը" (Ընդդէմ աղան-
դոց. Ե. 2. Ի-. 3)։

Այս խօսքիս մէջ սուրբը հայրապետը
երկու կերպ փոփոխութիւն իրարու քով
կը բերէ։ Մէկ փոփոխութիւնն է՝ հացին
և գինիին՝ Քրիստոսի մարմին և արիւն ը-

լալը։ Բաժակը և հացը աստուածային բա-
նը առնելով Քրիստոսի մարմնոյ և արեան
գոհութիւն կ'ըլլան. անով մեր մարմինը
կ'աճի, և մենք Քրիստոսի անդամ և յա-
ւիտենական կենաց ժառանգ կ'ըլլանք ը-
սաւ, և Քրիստոսի անդամ և անոր մար-
մինէն և ոսկորէն ըլլալն ալ հոգեւոր մըտ-
քով չի հասկընալը յայտնեց. հոգին միս և
ոսկր չունենար ըսելով։ Երկրորդ փոփո-
խութիւնն է մեր մարմնոյս փոխվիլը. որ
Քրիստոսի մարմինը և արիւնը մեր մար-
մնոյն և արեանը հետ խառնըվելով՝ մեզ
մարմնով ալ յաւիտենական փառաւոր
կեանքը ստանալու յարմար կ'ընէ։ Ինանկ
որ՝ թէպէտ ամէն մարդ իրեն ըրածին հա-
տուցումը մարմնով ալ առնելու համար
յարութիւն պիտի առնէ, բայց յաւիտեան
ապրելու համար, այսինքն՝ Աստուծոյ հետ
միանալու համար՝ պէտք է որ նոյն իսկ յա-
րութիւնը և կեանքը՝ որ է Քրիստոս, իր
մարմնոյն հետ միացուցած ըլլայ, անոր
մարմինը և արիւնը ճաշակելով։

Ասոնք ըսելէն ետքը իրաւունք ունէր
սուրբ հայրապետը Վաղենտինեան և Մար-
կիոնեան հերետիկոսներուն ըսելու՝ որ
կամ իրենց մոլորութենէն ետ կենան,
կամ հաղորդութեան խորհրդոյն Քրիստո-
սի մարմին և արիւն ըլլալը չընդունին. եր-
կուքը մէկ տեղ ընդունիլը՝ հակասութե-
մէջ կը ձգէ։ Ուստի այն Գնոստիկեան

նելը՝ որոնց համար սուրբն Իգնատիոս գրեց, գոհութեան խորհրդոյն Քրիստոսի Ճշմարիտ մարմին և արիւն ըլլալը կ'ուրանային. քանզի իրենց դրութեանը չի յարմարիլը կը հասկընային. ուստի ասոնք Վաղենտինեան և Մարկիոնեան Գնոստիկեաններէն աւելի խորամանկ և յանդուգն գըտնըվեցան. խորամանկութեամբ ուզեցին որ իրենց աղանդոյն հակասութիւն ունեցող բան մը չի գըտնըվի իրենց ընդունած բաներուն մէջ. և գըտնըվածը յանդգնութեամբ ուրացան։ Ասոնց պէս ընել՝ կամ իրենց աղանդնին ձգել կը յորդորէ անոնք սուրբ հայրապետը այս խօսքովս։ "Քրիստոսի մարմնովը և արեամբը "սնունդ առնողները ինչպէս կ'ըսեն որ "մարմինը կ'ապականի և կեանք չընդունի։ Ինանկ է նէ՝ կամ մոքերնին թող "փոխեն, կամ վերոյգրեալ պատարագը մատուցանելէն թող ետ քաշվին։ Մեր "միտքը՝ գոհութեան խորհրդոյն է-խարիստիային համաձայն է. և գոհութեան խոր"հուրդը՝ մեր միտքը կը հաստատէ։ Քանզի՞ անոր կը մատուցանեմք իրենինները. "միանգամայն և մարմնոյ և հոգւոյ հաղորդութիւն և միութիւն կը քարոզեմք։ "Քանզի ինչպէս որ երկրաւոր հացին վրայ "աստուածային կոչումը ըլլալով՝ անկէց "ետքը լոկ հաց չէ՛, այլ երկուքէ բաղկացեալ գոհութեան խորհուրդ է-խարիս-

„ դիա է . այսինքն՝ երկրաւորէն և երկնա-
„ ւորէն մէկ եղած . նմանապէս մեր մարմի-
„ նքն ալ գոհութեան խորհուրդը ընդու-
„ նելով հիմակուց անապական չեն , այլ
„ յարութեան յոյսը ունին „ (Ա՝ԴԴԷՀ Ա-
ՂԱԴՈՅ . Գ . 18 . ՌԻ- , 5) ։

Գոհութեան խորհուրդը երկու բանէ բաղկացեալ է ըսելը՝ կարելի է որ ոմանց կարծիք տայ , որպէս թէ սուրբը Հայրապետը | ուտերի վարդապետութեան պէս կը սորվեցընէ . և հաղորդութեան խորհրդոյն մէջ հաց՝ և միանգամայն Քրիստոսի մարմին կը ճանչնայ ։ Այսպէս ըլլայ ալ նէ՝ հիմակվան գտնըվող նորաղանդներուն խեր չունի . քանզի | ուտերի ըսածին պէս ըսելով ալ սուրբը խորհրդոյս մէջ Քրիստի անձամբ ներկայ գտնըվիլը խոստովանող այնքան քիչ է , որ կրնամք ըսել թէ բնաւ մնացած չէ՛ . միայն Գերմանիայի քանի մը գաւառներու մէջ կը գտնըվին . անոնք ալ օրէ օր քիչնալու վրայ են . և ասոնք են ճիշդ | ուտերական ըսվածները ։ Սակայն սուրբ Հայրապետին խօսքին միտքն ալ այս մտքէս հեռու է ։ Թէ որ այս միտքըս ունենար նէ՝ չէր ըսեր , թէ „ Աբարած հացը իրեն մարմին կ՚ընէ „ , այլ՝ թէ „ արարած հացը իր „ մարմնոյն հետ կը միացընէ „ ։ Այլ և՝ թէ որ սրբագործեալ հացին գոյութիւնը սրբագործութիւն փոխված և Քրիստի մարմին եղած չըլլար նէ՝ չէր կրնար մեր մարմնոյս

հետ միանալովը մարմնոյս անմահութիւն հաղորդել. որ ինքը անգամ չէր ունենար. քանզի ինչպէս անմահութիւն կ'ունենայ լոկ հացը. և իրեն չունեցած բանը ինչպէս ուրիշին կը հաղորդէ։ Այս թէ որ առանց գոյութիւնը փոխելու միայն յատկութիւնը փոխելով անմահութի հաղորդելու կարող ըլլար նէ՝ սրբոց մարմիններն ալ՝ որ անապական մնալու հաղորդական զօրութիւն մը առած են Աստուծմէ, ուրիշներուն ալ կրնային հաղորդել. որով սրբոց մարմինը ուտելն ալ նոյն զօրութիւնը պիտի ունենար։ Անանկ ըսող եղած է միմինչեւ հիմայ։ Իր բնութեամբը անապական, որով և անապականութիւը մեզի հաղորդելու բաւական՝ միայն մէկ գոյացութիւն մը կայ. ուստի սուրբ հայրապետին ըսած երկու բանը՝ որոնցմէ կը բաղկանայ հաղորդութե խորհուրդը, և մէկը երկրաւոր է և մէկալը երկնաւոր, անանկ հասկընալու է, որ երկրաւորը՝ տեառն մերոյ մարմինն ու արիւնն է, որուն ծագումը երկրէս է. այսինքն՝ սուրբ Աստուածածնի կուսական արգանդէն։ Այս երկնաւորն է Բանն աստուած. որ մարմնոյն հետ անբաժանելի միութեամբ միաւորված ըլլալով անանկ որ՝ մարմինը Բանին աստուծոյ հետ մէկ անձն կ'ըլլան, երկուութիւն չի մընար անձին կողմանէ, ասով մարմինը անապական կ'ըլլայ. և մարմինը Ճաշակողին

ալ այս անապականութիւնը կը հաղորդէ։ Այսով սուրբ հայրապետը՝ մարդոյս ստանալու անմահութեանը բուն աղբիւրը կը ցուցնէ. որ է Յանին աստուծոյ մարդկային բնութեան հետ անբաժանելի միաւորութիւնը։

Սուրբ Գրանոսին խօսքը աղէկ և կատարեալ հասկընալու համար այս բացատրութիւններս տալ հարկ եղաւ. և ասոնցմէ կը հասկըցվի՝ որ Յովհաննու աւետարանին վեցերորդ գլխոյն մէջ գրուած խօսքերը՝ Քրիստոսի երկրորդ դարուն մէջ գտնըվող քրիստոնեայները ամէնն ալ հաղորդութեան վրայ կը հասկընային. և բուն նկարագրական մտքովը կ'առնէին. հացը բուն հաց, մարմինը բուն մարմին, և է ըսելուն ուրիշ նշանակութիւն չունենալը հաստատութիւն գիտէին։ Գր. ասիկայ հերետիկոսները անգամ այսպէս կ'ընդունէին։ Անաւանդ անանկ հերետիկոսներ ալ՝ որ Քրիստի մարմնոյն ճշմարտութեանը չէին հաւատար, աւետարանին խօսքը ուրիշ մըտքի տանելուն անհնարութիւը տեսնելով՝ եկեղեցւոյ հաւատացածին պէս կը հաւատային. և ասով՝ կամայ ակամայ՝ հակասութեան մէջ կ'ինային. քանզի այն գլխոյն վրայ այլաբանական մեկնութիւն տալը տակաւին այն աստենը հնարված չէր, անոնցմէ հազար հինգ հարիւր տարիի չափ ետքը հնարվեցաւ։

Հաղորդութեան խորհրդոյն վրայ Պա-
զենտինեանց հաւատքը եկեղեցւոյ հա-
ւատքին պէս ըլլալուն վկայ ունիմք նոյն ա-
զանգէն Մարկոս կախարդ ըսուած մէկու մը
պատմութիւնը։ Այսոր համար սուրբն Ի-
րանոս (Ինդդէմ աղանդոց. գր. ա. գլ. 15),
կը պատմէ որ՝ գինիով լեցուն բաժակ մը
կ'առնէր. և սրբագործութեան խօսքին
տեղը քանի մը ինքնահնար անիմանալի խօս-
քեր խօսելով՝ վարպետութիւնով մը բա-
ժակին մէջը արիւն կը ցրցընէր։ Թէ որ
եկեղեցին երկրորդ դարուն մէջ չի հաւա-
տար որ սրբագործութեան խօսքին ուժովը
հացն ու գինին կը փոխվին՝ և Քրիստոսի
մարմին և արիւն կ'ըլլան, Մարկոս կախար-
դին միտքն ալ չէր գար որ ասանկ վարպե-
տութիւնով սկիհին մէջ արիւն ցրցընէ։
Ի՞նչ թէ որ չի հաւատար որ քահանայու-
թիւնը մարդոյս բնականէն վեր զօրութի-
կուտայ, այս զօրութիւնս ինքն ալ ունե-
նալ չէր ցրցներ։ Այսիկայ այսպէս ընելով,
և բաժակին մէջ ճշմարիտ արիւն ցրցընե-
լով՝ իրեն քովը մէկ աւելի զօրութիւն մը
ցրցընել ուզեց. և սրբագործութե խօսքը
փոխելով՝ զինքը աւելի իմաստուն ձեւա-
ցոյց. որպէս թէ ըսել ուզելով. քահա-
նայներուն ըսած սրբագործութեան խօս-
քը հացը մարմնի և գինին արիւնի կը փո-
խէ, բայց առաջին կերպարանքնին նոյնը
կը մնայ։ Ես անանկ խօսք մը գիտեմ որ՝

գինիին արտաքին երեւոյթն ալ կը փոխէ, արիւն կ'ընէ։

Ահա այսպէս սուրբ հայրապետները իրենց վկայութիւնովը, կուսակրոնները իրենց զրպարտութիւնովը, հերետիկոսները իրենց հակասութիւնովը, և այս կախարդս ալ իրեն կախարդութեամբը՝ եկեղեցւոյ այն ատենվան հաւատքը մեղի կ'իմացընեն։ Մենք հիմա այն ուրիշ դարուն հայրապետաց վկայութիւնները շարունակեմք։

4. ԿՂԷՄԷՍ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՑԻ

Այս իմաստուն մարդս աղէքսանդրացւոց եկեղեցւոյն քահանայ էր. և Քրիստոսի 189 թուին՝ Դեմետրիոս Աղէքսանդրիոյ եպիսկոպոսը ասիկայ քրիստոնէական վարդապետութեան դպրատանը նախագահ դրաւ՝ Պանտենոսին տեղը։ 202 թուին՝ Սեւերոս կայսեր հանած հալածման պատճառաւը Աղէքսանդրիայէն փախաւ, Կապադովկիայի Փլաբիադէս քաղաքը գնաց։ Անկէց 209 ին՝ Երուսաղէմի Նարկեսոս եպիսկոպոսին գործակից գնաց. 211 ին եպիսկոպոսի ընտրութեան համար ըլլալու ժողովքի մը մէջ գտնըվելու մտօք Անտիոք գնաց։ Մեռնելուն ճիշդ ժամանակը ստոյգ չի գիտցըվիր. բայց հաւանելի կ'երեւի որ 217 թուին ատենները մեռած ըլլայ։

Այս իմաստուն վարդապետս հրահան-

գաց Ի՞էսուսն գրքին մէջ կ՚ըսէ։ «Ամե-
„նայնի Հայրը մէկ է. ամենայնի Բանը
„մէկ է. Հոգին սուրբ մէկ է՝ և ամէն
„տեղ նոյն է։ Կոյս մայրը մէկ է, և ես ա-
„սոր ուրախութեամբ Աստուծոյ անունը կու-
„տամ։ Այս մէկ հատիկ մայրս կաթն չու-
„նէր. քանզի հարս եղած չէր. կոյս էր։
„Միանգամայն կոյս էր և մայր. անարատ
„ըլլալովը Կոյս. գթած ըլլալովը Մայր։ Իր
„զաւակները իրեն կը կանչէ, և սուրբ կա-
„թով մը անոնք կը սնուցանէ. որ է Բանն
„աստուծոյ՝ որ տղայ եղաւ։ Այսոր համար
„է որ ինքն կաթն չունի. քանզի իրեն
„կաթը այս իրեն սրտին (սիրելի) զաւակն
„է. Յիսուսի Քրիստոսի մարմինը՝ որ նոր
„ժողովուրդը բանիւ կը մեծցընէ, կ՚աճե-
„ցընէ. և այս նոր ժողովուրդս ալ ինքն
„ցաւով ծնաւ, և իրեն պատուական ա-
„րիւնովը խանձարուրով պատած պէս
„պրլեց։ Ով երանելի ծնունդ. ով սուրբ
„խանձարուրք։ Բանը այս տղուս համար
„ամէն բանի տեղ կը բռնէ. հայր է և
„մայր և ուսուցիչ և սնուցիչ։ Մարմինս
„կերէք և արիւնս խմեցէք ըսաւ. այս է
„տեսուն մերոյ մեղի տուած մասնաւոր
„անունդը. մարմինը կուտայ, արիւնը կը
„թափէ. և տղուն աճմանը պէտք եղած-
„ներէն բան պակաս չի մնար։ Այս ի՞նչ
„անիմանալի խորհուրդ է. առաջին ապա-
„կանութեանը հրաման կ՚ընէ որ զատվի

„այն մարմինէն՝ որուն հետ միացած էր՝
„առաջին կերակուրներուն պէս. և կը կա-
„մի որ մարմինը նոր կերակուրով սնանի.
„այսինքն՝ Յիսուս Քրիստոսով. որպէս զի
„Քրիստոս մեր մէջը ընդունիմք. և թէ որ
„հնար է՝ մեր կուրծքը թաղեմք ու պա-
„հեմք, և անով մեր մարմնոյն պակասու-
„թիւնները շիտակեմք „(Հրահանգ. Ա. 6)։

Տե՛ս. ասիկայ ալ հաւատացելոց կերա-
կուր կը ցրցընէ Ճշմարտապէս մարդացեալ
Բանն աստուածը։ Ընանկ որ՝ ասոր հետ
երկու կերպով միացած կ'ըլլամք։ Նախ՝
անով որ անոր արիւնէն ծնած եմք. քան-
զի մեր հոգեւոր ազատութիւնը անով գտած
եմք։ Երկրորդ՝ նոյն Բանէն սնունդ առ-
նելովին. որ անոր արեամբը կը սնանիմք։
Եւ հոգեւոր մտքի առնելով՝ տղայոց ինչ
որ կ'ըլլայ նէ՝ մեզի ալ նոյնը կ'ըլլայ. զին-
քը ծնողին անձէն և էութենէն սնունդ
առնելով։ Ուստի Կղէմէս եկեղեցին Քրի-
ստոսի մարդեղութեանը պտուղ կը սե-
պէ. քանզի մկրտութեան և հաղորդութե-
խորհուրդներովը ՝ծածային բանը եկեղեց-
ւոյ հետ միանալով՝ եկեղեցին անոր Ճիշտ
մարմին կ'ըլլայ. որով Քրիստոսի և եկե-
ղեցւոյ միութիւնը անբաժանելի է, ինչ-
պէս որ ՝ծածային և մարդկային բնութեանց
միաւորութիւն ալ անբաժանելի է։ Եկե-
ղեցին Քրիստոսի արիւնովը կ'ապրի. քան-
զի ինքն կոյս ըլլալով՝ իրեն յատուկ կաթ

չունի. և կոյս է, վասն զի անարատ է. ասոր համար եկեղեցին յաւիտեան անեղծ և անկորուստ է. ինչպէս որ նոյն վարդապետը յաճախապատում Աղրօմատ գրքին մէջ կ'ըսէ (Գ. դ. գլ. 26)։ Եկեղեցին կոյս է. քանզի ամէն հերետիկոսներէ մաքուր է. և իրեն անդամներէն ո՛վ որ հերետիկոս ըլլայ նէ՝ անիկայ կը կըտրէ և իրմէն կը զատէ, որ ինքը անարատ և սուրբ մնայ։ Հերետիկոսները գանգատ կ'ընեն որ եկեղեցին զիրենք մերժեց. բայց ասով իրենց չարամտութիւնը կը հաստատեն [1]։

[1] Ասոր վրայ այս տեղը բան մը պատմեմ. և որի համար որ կը պատմեմ նէ՝ կարելի է որ այս տետրակս կարդայ, և իր ըսածը իր մտքէն խոստովանի. և բերնով ալ իր մտերիմներուն զրուցէ. Այս մարդս՝ օր մը ինձի գանգատեցաւ՝ թէ մեզ եկեղեցիէն վռընտեցին։ Հարցուցի իրեն՝ թէ եկեղեցին ի՞նչ բան ունիս. որովհետեւ եկեղեցի գացողներուն համար կ'ըսէք որ կռապաշտութիւն կ'ընեն, հացին և գինիին Աստուած ըսելով կը պաշտեն. պրպտիկաստուածներ հնարեր են, սուրբ են ըսելով կը պաշտեն. խաչի և պատկերներու և մասունքներու կը պաշտեն։ Թէ որ ըսի ասոնք ձեր մտքին մէջէն ալ կռապաշտութիւն բրնած էք նէ՝ խիղճերնիդ ձեզ չի տանջեր մի, երբոր այսպիսի կռապաշտութիւն եղած տեղը կ'երթաք։ Պատասխան տուաւ, թէ մեր եկեղեցի երթալը ուրիշ մտքով է. քանզի ասով մեծ գիւրութիւն կ'ըլլայ մեզի որ ճշմարտութիւնը ուրիշներուն սորվեցընենք։ Այսպէս ըսողը տակաւին ինքը չէ գտած ճշմարտութիւնը, որովհետեւ կը բընտրռէ կորեւ իր բընտրռելը արդարացընելու համար՝ քրիստոնէից ժողովքէն կը զատվի. փարիսեցիներուն կարգը կը խառնըվի և կ'ըսէ՝ որ Քրիստոս ինձի պատուիրեց թէ "Քննեցէք զգիրս" (Յովհ. Ե. 39)։ Անանկներն են որ տակաւին չի գըտած ճշմարտութիւնին ուրիշներուն քարոզելու համար

Եկեղեցւոյ իր զաւակները մնուցանելը երկրաւոր նիւթով և աշխարհային կերակուրներով չէ. Յիսուսի Քրիստոսի մարմնով և արեամբն է, և մենք թէ ասոր համար՝ և թէ կենարար վարդապետութիւնը եկեղեցիին սորվելնուս համար՝ կըրնամք եկեղեցիին մեր փրկութեանը միջնորդ ըսել։ Այս մտքիս վրայ կ'ըսէ Կղեմէս. «Յիսուս Քրիստոս մեռելներէն յարութիւն առնելէն ետքը իր հարսին հետ կ'ուրախանայ. և այս հարսն է՝ որ մեզի փրկութեան առաջնորդելու օգնական կ'ըլլայ. անոր համար եկեղեցւոյ դիմացկուն և երկար ատեն մնացող Լիբանի անուն տըրված է. որովհետև յաւիտեան կը մնայ ուրախութեան մէջ. կամ անոր համար որ հաւատացելոց հաստատութեամբը կը մշտնջենաւորէ որ Քրիստոսի անդամ եմք» (Հրահանգ. ա. 5)։ Տես որ այս իմաստուն վարդապետս եկեղեցւոյ համար կ'ըսէ՝ որ մեզի փրկութեան առաջնորդելու օգնական պիտի ըլլայ, և յաւիտեան պիտի մնայ. և յաւիտեան մնալն ալ՝ հաւատացելոց հաստատութեամբը պիտի ըլլայ. ասոր ալ պատ-

եկեղեցին մնալ և հաւատացելոց հետը խառնըվիլ կ'ուզէն. բայց եկեղեցին ճշմարտէր հովուաց միջնորդութեամբը ասոնք կը վերընտէ եկեղեցիին. քանզի եկեղեցւոյ պարտքն է որ իր զաւակները մնուցանէ. և հովուաց պարտքն է՝ որ գայլերը ոչխարաց մէջ չի հանդիպցընէ։

ճառը այն է՝ որ հաւատացեալները Քրիս-
տոսի անդամ են և Քրիստոսի անդամ ըլ-
լալն ալ՝ Քրիստոսի մարմնոյն և արեանը
հետ հաղորդելով կ'ըլլայ. ինչպէս որ ըսած
եմք վերը. և այս վարդապետիս վերի խօս-
քէն ալ կ'երեւի։ Ուստի այս ալ մէկ աստ-
ուածային տնտեսութիւն մըն է, որ եկե-
ղեցիէն զատվողնորաղանդները հաղորդու-
թեան խորհուրդէն ալ զատված են՝ անի-
կայ իբրեւ Քրիստոսի մարմին և արիւն
չընդունելով. որով Քրիստոսի հետ հա-
ղորդ ըլլալու բան մը չըլլար. մկրտութին
ալ անպիտան կը սեպեն. որ 'ի Քրիստոս
վերստին ծննդեանը և Քրիստոս իր վրան
հագնելու խորհուրդն է. ասկէց ալ զատ-
վելով՝ Քրիստոսի եկեղեցւոյ հետ միա-
ւորութեան բան չի մնար. և այս խորհուր-
դածութիւններս բաւական են խելքը գը-
լուխը եղող մարդուն՝ որ ասոնց վարդա-
պետութեանը վտանգաւոր ըլլալը ճանչ-
նայ. և թէ որ փրկութեան ճամբան մը-
նալ ուզէ նէ՝ Ռեալ ֆրիո-Ռեան առաջնորդելը-
օգնական եղող հարսին փրկարար վարդապետու-
թենէն չի զատվի։ Այս վարդապետուներս
վկայներն են մինչեւ հիմա յիշված և աս-
կէց ետքը յիշվելու հայրապետները և վար-
դապետները։

5. ՍՈՒՐԲՆ ՀԻՊՈՂԻՏՈՍ

Այս սուրբը հայրապետաց՝ որբոյն Աբրահամայ աշակերտն էր կ'ըսէ Փոտիոս (Մատենադարան, Գիրք. ճիա), կամ Կղեմէս աղէքսանդրացիին աշակերտն էր. ինչպէս որ Բարոնիոս կ'ըսէ թէ տեղ մը ասանկ գրած տեսայ. (Անկեղեցական պարեգիրք, յամի տեառն. 229)։ Աղէքսանդրոս կայսեր օրը իր գրուածներովը եկեղեցւոյ մէջ երեւելի եղաւ. որ տեղն եպիսկոպոս ըլլալը և մեռնելուն ճիշդ թուականը յայտնի չէ. բայց երբորդ դարուն սկիզբները ըլլալով՝ տուած վկայութիւնը իր ժամանակի եկեղեցւոյն դաւանութիւնը կը հաստատէ. և մեզի ալ այս պէտք է։

Այս երանելիս ուրիշ գրքերէն զատ՝ Սողոմոնի առակաց գրքին մեկնութիւն ալ շինած ունի. որուն ամբողջը հիմա չի գտնըվիր. բայց հին առեններուն կը գտնըվէր. ինչպէս որ կը վկայեն Եւսեբի (Պատմ. եկեղ. գ. 26). և Հերոնիմոս (Յաղագս երեք-էլի արանց. գլ. կա)։ Այս մեկնութիւն գրքէս այլ և այլ գրքերու մէջ իբրեւ վկայութիւն առնըվածները Դատարիչիս անուն իմաստուն մարդը ժողվեց. և հիմա ամբողջ գտնըված գործքերովը մէկ տեղ Մատենագրութիւն որբոյն Հիպոլիտոսի անուանով տպեց Ամստուրկ քաղաքը. 1716 և 1718

թուին, երկու հատոր. իրենմէ ալ և ուրիշ մեկնիչներէ ալ ընդարձակ ծանօթութիւններ դնելով։

Սուրբ հայրապետը հաղորդութիւն վրայօք ունեցած հաւատքը այս առակաց մեկնութեան գրքին մէջ կը բացատրէ. և ասով՝ ուրիշ ըսած խօսքերուն ալ միտքը կը հասկըցվի. ուստի հոս առաջ ասիկայ դնեմք։ Ուրակաց իններորդ գլխոյն «Պատ» բատուեաց զսեղան իւր» խօսքը մեկնելով կ'ըսէ որ՝ այս խօսքովս պէտք է հասկընալ ամենասուրբ գոհութեան խորհրդոյն վրայ ունեցած հաւատքնիս, և «Վ ե հ ա ֆ ա ռ և» անարատ մարմինն ու արիւնը՝ որ ամէն օր [1]

[1] Այս բանաձքէս կ'երևի՝ որ մինչև սրբոյս ատենը ամէն օր պատարագ կ'ըլլայ եղեր. և ասոր սկզբնաւորութիւնը կը գտնենք առաքելոց ատենէն. «Հանապազօր» կանխեալ միաբանութիւն 'ի տաճարն և առանին՝ բեկանէ» ին զհացն, և առնուին կերակուր ուրախութեամբ և» միամտութեամբ արարի» (Գործք. բ. 46)։ Բէնանէլ ղհացն Ներոնէ Հերակոսը՝ երկուքը մէկ տեղ յիշվելուն վրայ տես ինչ որ ըսինք վերը. (Թղթ. ՅԾ. ԺԱ)։ Կիրակի հիներ անունով մեռելոց Իզմիր տրտմված տեսարակին հեղինակն ալ Բենանէլ ղհացն խօսքով՝ պերոնի ընիրիսպէն հաղորդիլ օնֆոյ կը հասկընայ. (Թղթ. 46). բայց անանկ կը կարծէ որ՝ այս բանիս համար առաքեալները միայն կիրակի օրը յատկացուցին. և ասոր վկայութիւն կ'առնէ սա խօսքը, «Յաւուրն շաբաթուց մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհացն» (Գործք. Ի. 7.) օր ղաբաղոց հոս կիրակի ըսել հասկընալով, ինչպէս որ գործք առաքելոցի հայու գրով տաճկերէն թարգմանելով Իզմիր տպողն ալ հասկրցեր է. թէպէտ նոյն գիրքը աշխարհաբառ թարգմանողը՝ որ այն ալ հիրայի հիներ տեսարակին՝ և նոր կտակարանը տաճկերէն թարգմանողին կրօնակիցներէն է, օր ղաբաբոցը շաբաթ օր հասկրցեր է. այս

„կը պատարագվի խորհրդաւոր և աստուա-
„ծային սեղանոյն վրայ. այն առաջին սեղա-
„նին՝ և Աստուծոյ խորհրդաւոր և միշտ
„յիշվելու արժանի ընթրեացը յիշատակը
„ընելու համար „։ Այս ըսելէս անմիջա-
պէս եռքը կը բացատրէ՝ „Եկայք կերայք
„'ի հացէ իմմէ „ խօսքը մեկնելով, թէ Յի-
սուսի մարմնոյ և արեանը բնչ մոքով աս-
տուածային ըսեր է. „Նոր աստուածային
„մարմինը և վերհատուած արիւնը մեզի ուտե-
„լու և խըմելու համար տրըվեցաւ կ'ըսէ,
„որ մեր մեղացը թողութիւն գըտնեմք „։

Սուրբ հայրապետիս ըսածին նայելով՝ Քրիստոսի խաչին վրայ պատարագվիլը, և մարմինը մեր փրկութեան համար տալը, և արիւնը մեր փրկութեան համար թափելը՝ այս խորհրդոյս մեզի կը յատկացը-նեմք. ինչպէս որ տեառն մերոյ Քրիստոսի սրվեցուցածն ալ ամէն կերպով ասոր յար և նման է. „Արբէք 'ի դմանէ ամենեքեան. „զի այդ է արիւն իմ Նորոյ ուխտի, որ 'ի „վերայ բազմաց հեղու 'ի թողութիւն մե-„ղաց „ (Մատթ. իզ. 27. 28)։ Այս արիւնս Քրիստոսի Աստուծոյ հետ միացեալ՝ և ա-

կը ցրցընէ որ՝ Իզմիրէն Կուիթիթին տպարանէն եկած գիրքերուն հեղինակները և թարգմանիչները ոչ սուրբ գիրքը կը կարդան՝ որ հանապազօր Բէյանէին տեսնեն. և ոչ իրարու գրած և թարգմանածը կը կարդան. որ օր ղաբաղոյին շաբաթ մի պիտի ըսեն՝ կիրակի մի պիտի ըսեն, խօսքերնին մէկ ընեն։ Այս աշխատութիւնս՝ ուրիշներուն են ձգէր։

նոր սեպհականը ըլլալէն զատ՝ անանկ գործ մըն ալ ունի՝ որ միայն Աստուծոյ յատուկ է. այսինքն՝ մեղաց թողութիւն տալը. ուրուն համար փարիսեցիք ըսին. «Ո՞վ կարէ թողուլ զմեղս. եթէ ոչ՝ մի Աստուած». և Քրիստոս անոնց ըսածը հաստատելով՝ հրաշք գործելը մեղաց թողութիւն տալէն գիւրին ըլլալը յայտնեց. և ասիկայ՝ մեղաց թողութիւն տալու իրեն իշխանութիւն ունենալը ցրցընելու համար ըսելը բացատրեց (Մտկ. բ. 7. 9)։ Արդ՝ այս գործս՝ որ է մեղաց թողութիւնը, Աստուծոյ յատուկ ըլլալով, Քրիստոսի մարմին և արիւն ալ մեղաց թողութիւն կուտան նէ՝ աստուածային մարմին և արիւն կըրնան ըսվիլ. ինչպէս որ սուրբ հայրապետս ըսաւ։

Եբ Հայրապետիս անունովը մէկ գիրք մը կայ. Յաղագս կոպարածի աշխարհի՝ Ի՛նէոին։ Աստ հեղինակը կ'ըսէ, որ Քրիստոս դատաստանին օրը պիտի ըսէ. «Ելկայք օրհնեալք, ելկայք քահանայք, ելկայք քահանայապետք որ զիս պատարագեցիք. որ զիս մաքրութեամբ նուիրագործեցիք. և ամէն օր զոհեցիք իմ պատուական մարմինս և իմ աստուածային արիւնս»։ Քննիչները կ'ըսեն՝ որ այս գիրքս սրբոյն Հիպոլիտոսի չէ. և իրաւունք ունին. քանզի մէկ ուրիշ գիրք մըն ալ կայ նոյն նիւթոյն վրայ, Յաղագս Քրիստոսի Ի՛նէոին. որուն ոճը

և իմաստը նը հայրապետիս ուրիշ գիրքերուն խօսքերէն և իմաստներէն տարբերուի չունին. այն և այս՝ երկուքը մէկ հեղինակի գործ չեն կրնար ըլլալ։ Բայց որոնը որ ըլլայ այս գիրքս, տուած վկայութիւնը մեր բանին կուգայ. որովհետեւ անանկ խօսքեր կան մէջը՝ որ իններորդ դարէն առաջ, այսինքն՝ Պասքասիոսէն առաջ գրված ըլլալը յայտնի կ'երեւի։

6. ՏԵՐՏՈՒԼԻԱՆՈՍ

Ազիկայ ափրիկեցի կռապաշտ ծնողաց զաւակ էր. Քրիստոսի 160 թուին ատենները ծնաւ Ափրիկէի Կարքեդոն քաղաքը. և կռապաշտութեան մէջ մեծցաւ։ Քրիստոնեայ եղաւ նէ 36 տարեան մը կար. շատ ատեն Հռոմ կեցաւ. և քահանայ ալ ձեռնադրեցաւ. Բարքը չափէն աւելի խստակրօն ըլլալուն համար՝ Անտանեան ըսված հերետիկոսներուն հաւանութիւն տալով անոնց աղանդը մտաւ, Քրի 203 թուին ատենները։ Եւ այն ատենէն ետքը շարունակ իր գրուածքներուն մէջ Անտանեան աղանդոյն հաստատութիւն կուտայ, և եկեղեցւոյ դէմ կը խօսի. անկէց առաջ գրածներուն մէջ ուղղափառ հաւատոց պաշտպան կը կենայ։ Բայց որովհետեւ հաղորդութեան խորհրդոյն վրայօք Անտանեանները չէին մոլորած, ուստի Տերտուլ-

զիանոսի գրած ամէն գիրքերը մէկ են այս բանիս վրայօք. ժամանակի խարութիւն չըլլար։ Մեռաւ Քրիստոսի 240 թուին։

Հաղորդութեան խորհրդոյն վրայ կը սովորեցընէ՝ որ Քէի մարմնոյ և արեանը ճաշակումը առաջ մարմնաւորապէս կ'ըլլայ. և այս կողմէն հոգւոյն ըլլալու օգուտը մարմնոյ միջնորդութեամբ կը հասնի։ Մարմնոյ միջնորդութեամբ հոգւոյ հասած ուրիշ օգուտներն ալ մէկ տեղ համրելով կ'ըսէ. "Մարմինը կը լուացվի՝ որ հոգին մաքրըվի. „մարմինը կ'օծվի՝ որ հոգին սրբըվի. մար„մինը կը կընքըվի՝ որ հոգին զօրանայ. մար„մինը Յիսուսի Քրիստոսի մարմնով և ա„րեամբը կը սնանի, որ հոգին Աստուծմէ „սնունդ առնէ" (Յաղագս յարութեան մարմնոյ. գլ. ը)։ Այս խօսքս թէ բառերը և թէ բուն միտքը՝ հաղորդութեան խորհրդոյն մէջ Յիսուսի Քրիստոսի անձնական ճշմարիտ ներկայութիւնը կ'իմացընէ։ Ո՛չ հացի խօսք կայ հոս, ո՛չ օրինակի. և մարմինը կը անանի խօսքին հետ ալ այս բառերս չեն յարմարիր. քանզի թէպէտ միտքը և երեւակայութիւնը օրինակով կը անանի կըրնանք ըսել, բայց մարմինը օրինակով սնանիլ և կըշտանալ չըլլար։

Նորաղանդները կը կարծեն՝ որ Տերտուղիանոսի վարդապետութիւնը իրենց բաժին պէս է։ Այս կողմէն մենք բոլորսին անտարբեր եմք. ինչպէս որ Տեր-

տուղիանոսի Մոնտանեան ըլլալը եկեղեցւոյ վարդապետութիւնը և աւանդութիւնը փնաս մը չունի, նմանապէս այս բանիս վրայօք նոր աղանդոյ մը հեղինակ ըլլալը մեղի մէկ փնաս մը չունի. քանզի անձին համար վարդապետութիւնը չեմք յարգեր, այլ վարդապետութեանը համար անձը կը յարգեմք։ Թէ որ Տերտուղիանոս եկեղեցւոյ համաձայն խօսեցաւ նէ՝ ուղղափառական խօսեցաւ, կ'ընդունիմք. այն ալ՝ Տերտուղիանոսին խօսքը ըլլալուն համար չէ։ Թէ որ եկեղեցւոյ հաւատքէն զատ ինքնահնար նոր հաւատք մը կը քարոզէ նէ՝ չեմք ընդունիր. չէ թէ անոր համար որ ըսողը Տերտուղիանոս է, այլ անոր համար՝ որ ըսած խօսքը եկեղեցւոյ ըսածին պէս չէ. և առաքելոյն ըսածը կ'ըսեմք անոր համար. «Եթէ ոք այլազգ ինչ „ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջմտու„թեան բանից տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, „և ըստ աստուածպաշտութեան վարդա„պետութեանն, այնպիսին (թէ՛ Տերտու„ղիանոս՝ և թէ ո՛վ կ'ըլլայ նէ ըլլայ) հպարտացեալ է և ոչ ինչ գիտէ» (Ա. Տիմոթ. գ. 3)։

Բայց առաջ տեսնեմք թէ Տերտուղիանոսի ըսածը իրաւ նորաղանդներուն ըսած միտքը կուտա՞յ մի. հաղորդութեան խորհուրդը Քրիստոսի ճշմարիտ մարմինը չէ՛, միայն անոր օրինակն է ըսեր է մի. թէ որ

յիրաւի սասանկ ըսեր է նէ՝ մենք պատրաստ եմք Տերտուղիանոսը այս կողմէն ալ նորաղանդներուն նախահայրներուն կարգը սեպել, ինչպէս որ եկեղեցին բամբասելուն կողմէն անոնց նախահայրը եղած է Մոնտանեան ըլլալէն ետքը։ «Մի թէ օրէնքն „մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ո՛չ լսեն ինչ „նախ 'ի նմանէ „ըսաւ Նիկոդեմոս (Յովհ. Է. 51)։ Ուստի տեսնեմք թէ Տերտուղիանոս ի՞նչ կ'ըսէ։

«Բրիստոս այսպէս ըսաւ, որ ցանկա„նալով ցանկացեր էր պասեքը ուտելու՝ „իբրեւ իրենինը. քանզի չէր վայլեր որ „Աստուած ուրիշին մէկ բանին ցանկանայ. „հացը առնելով՝ և աշակերտներուն բաժ„նելով՝ իրեն մարմին ըրաւ այս է մարմին „իմ ըսելով. այսինքն՝ իմ մարմնոյս ձեւը, „կերպարանքը» (Ընդդէմ Մարկիոնի. դ. 40)։ Ահա՛ Տերտուղիանոսի ըսած խօսքը այսքան է. և նորաղանդներն ալ այս վկայութիւնս այսքան երկար չեն բերեր. աւելի կարճ ընելով այսքանս միայն կը յիշեն. «Այս է „մարմին իմ ըսաւ. այսինքն՝ մարմնոյս ձե„ւը, կերպարանքը»։

Թէ որ Տերտուղիանոսին խօսքը այս է նէ՝ բամբասել և նորաղանդներուն կարգը անցընել չարժեր։ «Հացը առնելով և ա„շակերտներուն բաժնելով իրեն մարմին ը„ռա— ըսելէն ետքը «Այս է մարմին իմ» խօսքին մեկնութեան համար եվեղցուցած

ֆիլո—սս բառը նորաշանդնեբուն նպաստելու բառ մը չէ։ Ամիկայ աղէկ հասկընալու համար առաջ մէկ մը կարդա՛ ինչ որ սուրբ Յրանոս հայրապետին խօսքը բացատրած ժամանակնիս Մարկիոնի աղանդին վրայ խօսեցանք. քանզի Տերտուղիանոս ալ Մարկիոնեանց դէմ խօսելով սրբոյն Յրանոսի ըրած առարկութիւնը կ'ընէ անոնց դէմ. անանկ է նէ՝ հաղորդութեան խորհուրդը սուրբն Յրանոս և անոր առեղեան Գնոստիկեանները ինչպէս կը հաւատային նէ՝ Տերտուղիանոս ալ՝ իր ժամանակի Մարկիոնեաններն ալ անանկ կը հաւատային. և թէ որ Տերտուղիանոս նորաշանդնեբուն պէս հաւատար նէ՝ Մարկիոնեաններուն դէմ զօրաւոր առարկութիւն մը չէր կրնար հանել այս խորհրդոյս վարդապետութենէն։ Նորաշանդ մատենագիրները խաբողը լատիներէն ֆիլո—սս բառն է՝ որ Տերտուղիանոս գործ կ'ածէ. և մենք թարգմանեցինք յե—, կերպարանք։ Այլ որովհետեւ շատ տեղ օրինակ, նշան, նմանութիւն, պատկեր, և այլն, կը նշանակէ. նորաշանդները այս նշանակութիւնովս հասկցան. կամ իրենց գիրքը կարդացողներուն անանկ հասկցընել ուզեցին։ Սակայն Տերտուղիանոս ֆիլո—սս բառը՝ և ասոր բայը ֆինիօ, օրինակ տալու կամ կերգծելու կամ ուրիշ ասոնց նման մտքի չառնեը, փիլիսոփայական մտքով կ'առնէ. այն բանը՝ որով մէկ իր մը կը ներկայանայ

և կ'իմացվի, այն բանին ֆիկր կ'ըսվի. և որովհետև մէկ բանը ինչ որ է նէ՝ ա-նով իմացվիլը աւելի ճիշդ կ'ըլլայ. ուստի մէկ բանին ճիշդ ֆիկրն՝ Տերտուղիանոսի մտքովը առնելով, իրեն բուն էութիւնն է։ Ուստի նոյն տեղը կ'ըսէ Տերտուղիա-նոս. «Թէ որ ճշմարտութեան մարմին չըլ-» լար նէ՝ ձեւ չէր ըլլար։ Այլ և՝ պարապ» բանը և ըսկ երեւոյթ եղածը յե- չի կրը-» նար ունենալ»։ Այս տեղ ձեւ թարգ-մանածնիս՝ ֆիկր բառն է, և միտքը այս է. Քրիստոսի մարմինը ուրիշ երեւոյթ-քով, այսինքն հացի տեսակով ներկայացը-նելը՝ առանց ճշմարտութեան վնաս հաս-ցընելու, միայն այն ատենը կրնայ ըլլալ, երբ ընդունիմք Քրիստի ճշմարիտ և թանձր և շօշափելի մարմին ունենալը. անանկ որ պա-րապ բան և ըսկ երեւոյթ եղած չըլլայ։ Այս ասանկ ըսելէն ետքը՝ Մարկիոնի դէմ սա մտքին վրայ առարկութիւն մը կ'ընէ. թէ որ Քրիստոս միայն մարմնոյ երեւոյթ մը ունենար, ճշմարիտ և իրական մարմին չունենար նէ, հաղորդութեան խորհուրդը միայն հաց եղած կ'ըլլար. քանզի ըսկ կերպիքը և երեւոյթը չի կրնար հացին բնութիւնը և էութիւնը փոխել. և Մար-կիոնի ուրիշ բան մը չէր մնար յիմարութե ծայրը հասնելու, բայց եթէ ըսել՝ որ մեզի համար խաչը ելլողը հաց էր։ «Թէ որ կ'ըսէ» Քրիստոս ճշմարիտ մարմին չունենալուն

„համար հացը իրեն մարմին կերպաւորեց
„(ֆի՛նէսիդ, ֆինկօ բայէն), անանկ է նէ պէտք
„էր որ հա՛ցը տար մեզի համար. և Սար-
„կիսնին բաժը շիտակ ելլելու համարպէ՛տք
„էր որ հացը խաչ ելած ըլլար»։ Այս վերջին
խօսքս խիստ յայտնի կ'իմացընէ որ՝ հաղորդ-
դութեան խորհրդոյն մէջ հացի երեւոյթքով տեսնըվածը՝ Քրիստոսի խաչին վրայ
արիւն թափող մարմնոյն հետ մէկ կը ճանչնար։ Այս խօսքս շարունակելով Տերտուղիանոս՝ բաժակէն ալ նոյն առարկութիւնը
կը հանէ։ «Այսպէս բաժակովն ալ՝ իրեն
„արիւնովը կընքըված կտակին յիշատակը
„հաստատելով՝ մարմնոյն ճշմարիտ գոյու-
„թիւն ունենալն ալ հաստատեց։ Քանզի
„ճշմարիտ մարմինէն զատ արիւն ունե-
„ցող բան չի կրնար գըտնըվիլ։ Քանզի
„թէ որ գոյութեան որպիսութիւնը ան-
„մարմին է ըսեն նէ մեզի դէմ, այս ստոյգ
„է որ՝ միայն մարմինն է որ արիւն կ'ունե-
„նայ։ Անանկ գոյութեան ապացոյցը մար-
„մինէն կ'առնըվի. և մարմնոյն ապացոյցը՝
„արեան վկայութիւնէն»։ Թէ որ Տերտուղիանոս ալ բաժակին մէջի գինին՝ աբեան օրինակ փոխված սեպեր նէ, իր բերած ապացոյցը իրեն դէմ կը դառնար. քանզի մարմին չեղած բան մը՝ արիւն ունեցած կ'ըլլար։ Քանզի չի հասկըցվիր որ՝ հացն ու գինին՝ որ բոլորովին դուրսէն բաներ են, թէ որ ճշմարտապէս մարմնոյ և

արեան փոխված չըլլան նէ , ինչպէս Քրիստի մարմնոյ և արեանը ճշմարտութիւնը կըրնան հաստատել ։

Բայց մենք ուրիշ օրինակներով ալ տեսնեմք թէ Տերտուղիանոս յիշեալ ֆիկուրաբառը ինչ մտքի կ'առնէ ։ Այն գրքին մէկ ուրիշ տեղը՝ Աբրեմիա մարգարէին "Ակայք "արկցուք փայտ 'ի հաց նր" խօսքը (ԺԱ. 19) վկայութիւն առնելով կ'ըսէ Մարկիոնեաններուն. "Աստուած ալ ասանկ յայտնեց ձեր "աւետարանին մէջ, հացը իրեն մարմին "անուանելով. որպէս զի այս տեղս ալ ի- "մանաս՝ որ հեղ մը իր մարմնոյն ֆիկուրան "հացի տուաւ. որուն մարմինը առաջկուց "հացի օրինակաւ հասկըցուց մարգարէն. "նոյն տիրոջը ետքէն աւանդելու այս խոր- "հուրդը նշանակելով" (Ընդդէմ Մարկիոնի. գ. 19) ։ Մարգարէին այս խորհրդաւոր խօսքը տէրն մեր կատարեց ու մեկնեց, որ հաց բառը մարգարէին խօսքին մէջ Քրիստի մարմինը կը նշանակէր. քանզի հացին կերպարանքին և տեսակին հետ լծորդեց իրեն իսկական և ճշմարիտ մարմինը. այն մարմինը՝ որ հրեայները Խաչ հանելով անոր հացին (այսինքն մարմնոյն) փայտ խառնած եղան ։ Մարգարէն հաց ըսելով Քրիստի մարմինը հասկըցընել կ'ուզէր. և հաղորդութիւն խորհուրդը՝ հացի տեսակով Քրիստի մարմինն է ։ Ինանկ է նէ՝ այս խօսքերուս նայելով՝ Տերտուղիանոսի վկայութիւնը

ուղղափառ հաւատոյ դէմ չէ [1]։ Ուստի իբ-
րեւ եղբայրացութիւն կ'ըսէ նոյն վարդա-
պետը. «Աւետարանին մէջէն հայի և բա-
„ժակի խորհրդով հաստատեցինք տէրու-
„նական մարմնոյ և արեան ճշմարտութիւնը,
„Մարկիոնի ցնորքներուն դէմ» (Ընդդէմ
Մարկիոնի. Է. 8)։ Պատարագին առեղը ողջ
ջոյն առնել չուղղներուն համար ալ կ'ը-
սէ. «Շաբաթը պահոց օրը Պատարագի ա-
„ղօթքին գտնուիլ չեն ուզեր. որ աղօթից
„արձակումը՝ տեառն մերոյ մարմինը առ-
„նելով կ'ըլլայ» (Յաղագս աղօթից. Գլ. 14)։
Այսքանովս Տերտուղիանոսի միտքը բա-
ւական հասկըցվելէն ետքը՝ ուրիշ վարդա-
պետաց վկայութիւններուն գամք։

1 Մէկ աստուածաբան մը կ'ըսէ. Տերտուղիանոսի խօսքը պէտք է սանկ թարգմանել. «Յիսուս Քրիս-
„տոս հացը իրեն մարմին ըրաւ ըսելով, այս՝ որ մարմնոյս
„ձեւը կամ օրինակն է. իմ մարմինս է»։ Եւ ասիկայ հաստատելու համար կ'ըսէ որ այս ոճը Տերտուղիանոսի սովորական է. նոյն գրքին 11 գլուխը կ'ըսէ. «Բացից ա-
„ռակաւ զբերան իմ. որ է նմանութիւն». և միտքն է այս, բացից առակաւ՝ այսինքն նմանութեամբ զբերան իմ։ Ուրիշ տեղ մը կ'ըսէ. «Քրիստոս մեռաւ. որ է օ-
„ծեալն» (Ընդդէմ Պրաքսէայ. Գլ. 29). և ըսել է. մեռաւ Քրիստոս, որ է օծեալն։ Բայց մենք կ'ըսենք, թէ և ա-
սանկ անկանոն շաբքով գրելը Տերտուղիանոսի անսովոր բան մը չէ, բայց Տերտուղիանոսի ըսել տալ՝ թէ Քրիստոս ըսաւ որ իմ մարմինիս օրինակը իմ մարմինս է, անոր բերանը անչարմար և չի հասկըցվելու խօսք մը գրնել է. չմոցվիր թէ մարմնոյն օրինակը Բուռն իսկ այն մարմինն է ըսելը ինչ ըսել է։ Ուստի աւելի յարմար կ'երեւի մեղմ մեր դրած բացատրութիւնը։ Բայց ինչ միտք որ տրվի

7. ՈՐՈԳԻՆԷՍ

Ասիկայ՝ որ մականուամբ Ադամանտիոս կ՚ըսվէր, եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքը ծնաւ 185 թուին. ազնուական և քրիստոնեայ ծնողաց զաւակ էր. հայրը Լէոնիդաս՝ որ եռքը քրիստոսական հաւատոց համար նահատակեցաւ, ասոր շատ աղէկ կրթութիւն տուաւ։ Տասն և ութը տարվան էր, երբ որ Դեմետրիոս Աղէքսանդրիոյ եպիսկոպոսը ասիկայ քրիստոնէական վարդապետութէ դասատու ըրաւ. Քրիստի 203 թուին։ Այս պաշտօնս իրեն նախանձողներ և թշնամիներ ալ եվելցուց. որ վարդապետութիները քաշքըշելով և ծուռումուռ մեկնելով՝ անունը հերետիկոս հանեցին։ Այս թէպէտ շատ բանի վրայ թիւր կարծիքներ ունէր. իր սրամտութիւնը՝ չափէն աւելի ընդարձակ ազատութիւն կուտար իր մտքին, և ուղղափառութէ սահմանէն դուրս կ՚ելլէր, բայց հերետիկոս չէր կրնար ըսվիլ. քանզի շատ խոնարհ՝ և եկեղեցւոյ հնազանդ էր. և ինքզինք արդարացընելու համար իր մոլորութիները

նէ՝ չի կրնար Տերտուղիանոսի համար ըսվիլ որ՝ Կալվինի և Զուինգլիի մտօք է խօսածը, և հայը Քրիստոսի մարմնոյն օրինակ կը դաւանի. քանզի այս դաւանութիւնս, և նոյն վարդապետին նոյն խօսքին մէջ. Քրիստոս հայը առնելով ֆ ալֆէրոնէրոսն բաժնելով իրեն մարմին ըրաւ ըսելը իրաւ բոլորովին ներհակ և հակասական են։

պաշտպանելու չէր յամառեր. ուստի աւելի մոլորեալ կ'ըսվէր, քան թէ հերետիկոս։ Հաւատքի համար բանտ ալ մտաւ Դեկոս կայսեր հանած հալածման ատենը, 250 թուին. ետքը բանտէն ազատեցաւ. Տիւրոս գնաց՝ և հոն մեռաւ 254 թուին։

Ինք մեռնելէն ետքը շատ վէճ եղաւ ասոր վարդապետութեանը վրայ. պաշտպանողներուն մէջ ալ՝ հակառակողներուն մէջ ալ երեւելի մարդիկ կային. և պաշտպանողները ասոր վրայ ձգված մոլորութիւնները չէին պաշտպաներ, այլ անձը կը պաշտպանէին. այն մոլորութիւնները Որոգինէսի վրայ զրպարտութիւն է ըսելով։ Թէ՛ Որոգինէսի պաշտպանները և թէ՛ թշնամիները՝ ամէնն ալ միապէս ասոր անունովը հրատարակված մոլորութիւնները կը հերքէին։ Այս մոլորութիւններս ժողովքներով ալ քննվեցան, դատապարտեցան. բայց թշնամիներուն մէկն ալ չըսեր որ հաղորդութիւն վրայ այն ատենվան հաւատացեալներուն հաւատքէն տարբեր կը հաւատար. ուստի ասոր մոլորեալ կամ չի մոլորած, հերետիկոս կամ ուղղափառ ըլլալը մեր հիմակվան բանին ամենեւին չի դըպչիր. և ինչ որ ասոր գրուածոց մէջը հաղորդութեան խորհրդոյն վրայօք վարդապետութիւն գտնեմք նէ՝ այն ատենվան, այսինքն՝ երրորդ դարու և անկէց ետքը ոչքան որ Որոգինեան վէճը քշեց նէ, այսինքն՝ մինչեւ վեցերորդ դարու հաւա-

տացելոց ընդհանրապէս ընդունածն էր. չէ՞ նէ՝ այսքան տարվան մէջ 'ի հարկէ այս նիւթոյս վրայ ալ Աղոգինէսի համար գանգատ մը ըլլալու էր։ Հիմա տեսնեմք թէ ի՞նչ կը խօսի։

Հին օրինաց զոհերուն վրայ խօսելով՝ խօսքին կարգը նոր օրինաց զոհին կամ պատարագին վրայ կը բերէ և կ'ըսէ, "Ընտ„սունները արեանը մի՛ կապվիք. այլ „մանաւանդ սորվեցէ՛ք որ ճանչնաք Բանին „աստուծոյ արիւնը. մարիկ ըրէք թէ ինքը „ի՞նչ կ'ըսէ. այս է մարմին իմ։ Աղո՛ւ մըտքին „մէջ խորհուրդները տպաւորված են նէ՝ „Բանին աստուծոյ մարմինն ու արիւնը ա„նիկայ կը ճանչնայ։ Ընանկ է նէ՝ խորհրը„դոյն ծանօթ եղողներուն յայտնի՝ և ծա„նօթ չեղողներուն անյայտ բանին վրայ „երկար չի խօսիմք։ Նրբոր սուրբ կերա„կուրը և անապական ուտելիքը առնէք, „և կենաց հացն ու բաժակը ճաշակէք նէ՝ „այն ատենը տեսուն մերոյ մարմինը կ'ու„տէք և արիւնը կը խմէք. այն ատենը տե„ղը ձեր տունը կը մըտնէ։ Ընանկ է նէ՝ „պէտք է որ խոնարհիք. և հարիւրապե„տին նմանելով անոր հետ ըսէք. — Տէ՛ր՝ „չեմ արժանի եթէ ընդ յարկաւ իմով մըտ„ցես (Մատթ. ը. 8։)" — (Մեկն. ղևտաց. ճառ. թ. 10)։

Ըսածը այն ատենվան քրիստոնէից առհասարակ ընդունած վարդապետութիւնը

ելլալը յայտնի կը հասկցընէ Աղոդինէս, երբ կ'ըսէ. «Որու մտքին մէջ խորհուրդ-
» ները տպաւորված են նէ՝ Բանին աստու-
» ծոյ մարմինն ու արիւնը անիկայ կը ճանչ-
» նայ»։ Ասոնց գիտցածին թողելով թէ-
պէտ խորհրդոյս վրայ երկար չի խօսիր, բայց
ըսածին չափովը կատարեալ կը հասկցընէ՝
որ Յովհաննու վեց գլխոյն այլաբանական
մեկնութիւնը չէր ճանչնար. քանզի այն խօս-
քը որ կ'ըսէ, «Երբ որ կենաց հացն ու
» բաժակը ճաշակէք նէ՝ այն ատենը տեառն
» մերոյ մարմինը կ'ուտէք և արիւնը կը խը-
մէք» յայտնի կ'ընէ որ նկարագրական մտ-
քով կը հասկնար։ Ասանկ հասկնալը մէկ
ուրիշ խօսքովն ալ կ'իմանամք։ «Ամպով և
» ծովով առաջին մկրտութիւնը լոկ մէկ օրի-
» նակ մըն էր. հիմա մենք ճշմարտապէս ջը-
» րով և սուրբ Հոգւով վերոյին ծնանիլը ու-
» նիմք։ Ատեն մը մանանայն խորհրդոյն մէկ
» լոկ օրինակն էր. և այսօր իրապէս Բանին
» աստուծոյ մարմինը ունիմք. ինչպէս որ
» ինքն ըսաւ. — Արմին իմ ճշմարիտ կերա-
» կուր է։ (Յովհ. զ. 56»)։ — (Մեկն.
Ռոմ. Ճառ. ծ.)։

8. ՍՈՒՐԲՆ ԿԻՊՐԻԱՆՈՍ

Այս սուրբս Ամիրիկէի Կարքեդոն քա-
ղաքի ծերակոյտերուն ցեղէն էր։ Մկրբ-

տուԹենէն առաջ վարքը յայտնի չէ[1]. բայց մկրտուԹէն անմիջապէս ետքը իրեն Դոնատոս անուն բարեկամին նամակ մը գրեց, որ մինչեւ հիմա կը կենայ. և մէկ կըտորը մկրտուԹեան ճառին վերջը դրած եմք. այս նամակին խօսքերուն, և իրեն ամբողջ վարքը գրող Պոնտիոսին ըսածներուն նայելով՝ քրիստոնէուԹէն առաջ գէշ վարք մը ունեցած պիտի ըլլայ՝ որ գրելու արժանի չեն տեսեր։ Սուրբ Գրիգոր Նիւսացին ասոր ներբողին մէջ կ'ըսէ որ՝ կախարդուԹիւն կ'ընէր մկրտվելէն առաջ. և կախարդուԹիւններն ալ՝ իրեն երիտասարդական չարուԹիւնները գործի դնելու կը բանեցընէր։ Կեկիլիոս անուն քահանայ մը ասոր քարոզելով քրիստոնեայ ըրաւ. 246 Թուին մկրտվեցաւ, և իրեն հաւատոյ վարժապետին անունն ալ իր վրան առնելով՝ անկէց ետքը ըսվեցաւ Թասկիոս Կեկիլիոս Կիպրիանոս։ Մկրտվելէն քիչ մը ետքը քահանայ եղաւ. և Կարքեդոնի Դոնատոս եպիսկոպոսը վախճանելէն ետքը՝ բռնի եպիսկոպոս ըրին ասիկայ։ Դեկոսի հանած

[1] Սուրբ Գրիգոր Նիւսացին՝ և հայերէն ճառընտիրը և յայտնաւորքը՝ կ'ըսեն որ Յուստինէ կուսին պատմուԹեան մէջ յիշված Կիպրիանոսն է ասիկայ. քննիչները տարակոյս կը հանեն. որովհետեւ մէկուն համար Անտիոքացի կ'ըսէ պատմուԹիւնը. և մէկալին համար Կարքեդոնացի։ Ասոր համար մենք ալ հոս՝ մկրտուԹենէն առաջ վարքը անյայտ ըսինք։

հալածմունքին ատենը՝ 250 թուին, հարկ եղաւ փոխչիլ. այն միջոցին շատ ուրացողներ եղան։ Բիչ մը հալածանքը հանդարտեցաւ նէ՝ սուրբն Կիպրիանոս իր աթոռը դարձաւ. այն ատենը մկրտութէ վրայ վէճ մը ելաւ. ոմանք կ'ըսէին՝ որ հերետիկոսներուն մկրտածները նորէն պէտք է մը կրկրտել. և ասոնց գլուխն էր սուրբն Կիպրիանոս. բայց խիստ շատերը կ'ըսէին թէ մկրտել պէտք չէ՛. և ասոնց գլուխն էր ՆՐԲՆ Ստեփաննոս Հռովմայ հայրապետը։ Այս բանիս սուրբն Կիպրիանոս իրեն կուսակիցներովը մէկ տեղ սխալեցաւ կ'ըսէ ՆՐԲՆ Օգոստինոս՝ յաղագս մկրտութեան գրքին մէջ. քանզի ասոր վարդապետութիւնը ընդհանուր եկեղեցւոյ վարդապետութէ հետ չմիաբանեցաւ. բայց Կարթեդոն երրորդ անգամ այս բանիս համար ժողովք ըլլալէն ետքը՝ ինքն ալ իր ըսածները ետ կանչեց. և եկեղեցին խաղաղեցաւ։ 258 թուին սեպտեմբեր ամսոյ 14 ին նահատակեցաւ։ Ամբողջ վարդապետութեանցը մէջ՝ մկրտութէ վրայ ունեցած մասնաւոր կարծիքէն զատ պախարակելի բան մը չեն յիշեր ոչ իր ժամանակակիցները՝ և ոչ իրմէ ետքը եկող հայրապետները և ժողովքները։

Այս սուրբ հայրապետիս հաղորդութեան վրայ գրած խօսքերը՝ թէ խորհրդոյն և թէ արարողութեանցը վրայօք՝ շատ բաց են։ Արարողութեանց վրայ խօսածները

մեր կարգէն դուրս ըլլալով՝ միայն խորհրդ-
դոյն վրայօք խօսածներդ նայիմք։ Տէրու-
նական աղօթից մեկնութիւն մէջ՝ (գլ. 18),
„Օ՛հաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այս-
„օր„ խօսքին մեկնութիւն տալով կ'ըսէ.
„Կենաց հացն է Յիսուս Քրիստոս. և
„այս հացս ամէնուն չէ՛, այլ մերին է. և
„մենք ալ կ'ուզեմք որ այս հացս ամէն օր
„մեզի տրուի [1]. որպէս զի մենք՝ որ Յի-
„սուսի Քրիստոսի եմք, և ամէն օր գո-
„հութեան խորհուրդը իբրեւ փրկարար
„կերակուր կ'ընդունիմք, մէկ ծանր մեղ-
„քով մը երկնային հացին հաղորդութե-
„նէն դուրս չի մնամք. և Յիսուսի Քրիս-
„տոսի մարմինէն չի զատուիմք, որ իրեն
„համար ըսաւ. —Ես եմ հացն կենդանի
„որ յերկնից իջեալ—(Յովհ. զ. 51)։ Ընանկ
„է նէ՝ երբ կ'ըսէ որ իր հացէն ուտողը
„յաւիտեան պիտի ապրի, յայտնի է, մէկ
„կողմէն՝ որ ով որ միութիւն իրաւունք ու-
„նենալով անոր մարմինը կ'առնէ և կ'ըն-
„դունի նէ՝ անիկայ պիտի ապրի յաւի-
„տեան։ Մէկալ կողմէն ալ այն յայտնի է՝
„որ վախնալու բան է. չըլլայ որ Յիսուսի
„Քրիստոսի մարմինէն զըրկըվողները փըր-
„կութենէն ալ զըրկըված ըլլան. ուստի
„պէտք կ'ըլլայ աղաչել՝ որ իրենց ալ ասանկ

1 Սուրբ Կիպրիանոսի առեն ալ ամէն օր պատարագ կ'ըլլայ եղեր. տես ինչ որ ըսինք վերը, սուրբ Հիպոլիտոսին վրայ (Ծանօթ. 1)։

„բան մը չի պատահի. քանզի Յիսուս
„Քրիստոս ինքն է որ այս սպառնալիքս ա-
„նոնց կ'ընէ ըսելով. — Եթէ ոչ կերիջիք
„զմարմին որդւոյ մարդոյ՝ և արբջիք զա-
„րիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս —։
„Այսոր համար կը խնդրեմք որ մեր հացը՝
„որ է Յիսուս Քրիստոս, ամէն օր մեզի
„տրուի. որպէս զի անոր մէջ մնալով և ապ-
„րելով՝ անոր սրբութենէն և մարմինէն
„բնաւ չելլեմք և չի հեռանամք „։

Այս խօսքիս մէջ սուրբ հայրապետը մի և նոյն բան կը սեպէ հաղորդութեան խորհուրդը՝ և Յիսուս Քրիստոս. և հաղորդութեան խորհուրդէն զըրկուիլը՝ Քրիստոսի մարմինէն զըրկուիլ և անոր հետ եղած միութենէն զատուիլ կ'ըսէ։ Այսոր համար նոյն սուրբը ուրիշ տեղ կ'ըսէ՝ որ հալածման ատենը մօտենայ նէ, քրիստոնեայ տպաշխարողներուն արձակում տրուի որ հաղորդին. և ասով մահուան երկիւղէն ազատ մնան։ „Թէ որ կ'ըսէ՝ պատերազմին
„դիմանալու ջոկ ուժ դրտնելու համար
„անոնց տրուելու Յեսի Քրիստի արիւնը անոնց-
„մէ խնայեմք ի՞նչպէս կրնամք անոնք յոր-
„դորել որ իրենց արիւնը թափեն իրենց
„հաւատքը խոստովանելու համար. և թէ
„որ առաջ անոնք տէրունական բաժակը
„խմելու չընդունիմք նէ՝ ի՞նչպէս կրնամք
„անոնց սիրտ տալ՝ որ դատնութեան բա-
„ժակը պարպեն լըման խմելով։ (Նամակ.

ծդ. ՝՝ Մ՝ոչիմոս, Ա–ղբանոս. Ե այլն)։ Ուստի գանգատ կ՝ընէ անանկ մարդոց համար, որ կուռքերուն զոհ կը մատուցանեն. և քիչ մը եռքը կուգան, և պիղծ ձեռքովնին տեառն մերոյ Քրիստոսի մարմինը կը բըռնեն. և ատանկ ընողներուն պատահած սոսկալի պատիժները կը պատմէ (Ա՝՝ յաղագս անկիրց)։ Ուրիշ պատմածներուն մէջէն սա պատմութիւնը երեւելի է. որուն երանելին ինքը ականատես վկայ է. և մենք հոս իր բուն խօսքը դնեմք։ “Մէկը (կուռքերուն զոհելէն եռքը) մեր պատարագ ըրած ատենը գաղտուկ մը վրայ հասաւ. և չէ՛ թէ իրեն ճաշակ՝ այլ թուր առնելով, և կոկորդն ու կուրծքին մէջը մահացու թոյն առածի պէս անանկ մը կոկորդը սրխմը-վելու և շունչը կարճընալ սկսաւ, որ չարաչար թապրլտրկելով գետինը ինկաւ”։ Ասոր այսպէս ըլլալուն ականատես վկայ՝ սուրբ Կիպրիանոս հայրապետի պէս մարդ ըլլայ նէ, մէկը ո՛ւրքան որ հրաշքի չի հաւատայ ալ՝ ասոր հաւատալու է. քանզի այս ալ վարդապետական կարծիք չէ՝ որ կրնայ սխալիլ ըսենք. իր աչքին առաջը՝ և բազմութեան ալ աչքի առաջ՝ պատարագի ատեն եղած բան կը պատմէ։ Այս՝ նոր Պօղոս առաքեալն ալ կը վկայէ՝ որ անարժան հաղորդութիւնը ասանկ սոսկալի բաներ կ՝ընէ. “Որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստանս անձին իւրում

„ուտէ և ըմպէ. զի ոչ խլտրէ զմարմին
„տեառն։ Վասն այնորիկ իսկ են 'ի ձեզ
„բազում հիւանդք և ախտաժէտք. և շատ
„ևս այն են, որ և ննջեցեալքն իսկ ի-
„ցեն„։ (Ա. Կորն. ԺԱ. 29. 30)։

Նոյն սուրբը հայրապետը՝ եկեղեցիէն ելածին պէս շիտակ տեսարանները գրնա-ցող քրիստոնէի մը ըրած բանին անվայելուչ ըլլալը հասկցընելու համար կ'ըսէ. „Տէրունի տաճարէն դուրս ելածին պէս „հաղորդութիւնը տակաւին ծոցը ունե-„նալով՝ անհաւատը շիտակ Ռէտրոն կ'երթար. Յիսուսի Քրիստոսի սուրբ մարմինն ալ հետը տեսարանը տանելով„ (Ն՛սա- յաղագս Ռաբէրայ)։ Խօսքը յայտնի կը ցրցընէ թէ մի և նոյն բանն է՝ որ առաջ հաղորդո-Ռիո- անուանով կը հասկցընէ. և ետքը Յիսու-սի Քրիստոսի սուրբ մարմին կ'ըսէ։ Եւ հին ատենը սովորութիւն էր՝ որ հաւատացեալները իրենք եկեղեցւոյ մէջ հաղորդելէն ետքը՝ տուն ալ կը տանէին. որ տաճարը չի կրցող եկողներն ալ հաղորդութենէն զուրկ չի մնան. ինչպէս որ սուրբն Յուստինոս կը պատմէ (Ի ապոլոգ. ԺԱ. 66). որուն խօսքը վերը գրեցինք։

9. ՍՈՒՐԲՆ ՓԵՐՄԵԼԻԱՆՈՍ [1]

Այս սուրբս Հայրապետս ալ սէյն Կիպրիանոսի ժամանակակից էր. և կապադովկացւոց Կեսարիա քաղաքին եպիսկոպոս. մկրտութեան վրայ եղած վէճին առեն սրբոյն Կիպրիանոսի կուսակից էր. և մէկ ընդարձակ նամակ մըն ալ գրած ունի՝ որ սէյն Կիպրիանոսի նամակներուն կարգն է. և ակէց զատ գրուածք հասած չէ մեզի այս սրբ Հայրապետիս շինածներէն։ Մեռաւ 269 թուին. Տարսոն քաղաքը, երբ որ Նեստոր կերթար Պօղոս սամոստացի աղանդապետին դէմ հոն եղած ժողովքին մէջ գտնուելու համար։ Աստոր վարդապետութիւնը շատ յարգի է. և սէյն Եւսեբիոս կիսարացի (Գր. Յաղագս Հոգւոյն սրբոյ. գլ. 29), եկեղեցւոյ հաւատքը հաստատելու համար ասոր գրուածքներէն վկայութիւն կ'առնէ։

Այս սուրբս Հայրապետս յիշեալ նամակին մէջ կը գրէ սուրբ Կիպրիանոսին։ «Թէ՛ ընդունողները և թէ՛ ընդունվածները ինչ յանցանք ունին. երբ որ մեղքերնին զղուցելէն առաջ, և աղոթերնին եկեղեցւոյ

1 «Փերմելիանոս եպիսկոպոս Կեսարու կապադովկացւոց էր պատնշելի յուսուցմասիրութեան, որ և՝ ի տղայութեան իւրում առ Որոգինէս երթեալ վարժեցաւ» (Խորենի. բ. 76)։

„ լուացմամբը սրբելէն առաջ հաղորդու-
„ թիւը յափշտակելու յանդգնելով՝ տեառն
„ մերոյ մարմնոյ և արեան կը մերձենան.
„ բայց գլուխած է՝ որ, ո՛վ որ տեառն մերոյ
„ հացը անարժանութիւն ուտէ, և բաժակը
„ անարժանութիւն խմէ նէ՝ տեառն մերոյ
„ մարմնոյն և արեանը պարտական ելլայ „
(Թոռ-ղնչ սրբոյն Կիպրիանոսի. Նամակ. հե.) Ա-յս
ալ Պօղոս առաքելոյ գրած խօսքին մէջ հա-
ցըն ու բաժակը մարմին և արիւն Քրիստի կը
հասկընայ. պէտք է տերոյ մարմնոյ և արեան կը մեր-
ձենան ըսելէն ետքը յիշեալ վկայութիւնը
բերելով. որուն մէջ սուրբ առաքեալը
ուտելը հացին և խմելը բաժակին տալով՝
երկուքին ալ անարժանութեամբ ելլալուն
պարտականութիւնը Քրիստի տեառն մերոյ
մարմնոյ և արեանը կուտայ. ասիկայ՝ ընդ-
հանուր եկեղեցւոյն հասկցածին պէս՝ ա-
նարժան հաղորդութիւնն ալ Քրիստոսի
մարմնոյն և արեանը տալով՝ երկուքը մէկ
ելլալ կը հասկցընէ։

1846